Azg
armenian daily
2 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1997, ՇԱԲԱԹ #188 (1442)

# Ռուսաստանի ԱԳՆ-ն հերքում է Հասանովի հայտարարությունները

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ. «Նեզավիսիմայա գազետա»-ն հոկտեմբերի 1-ին հրատարակել է Հ. Հասանովի հարցազրույցը, որում Ադրբեջանի արտգործնախարարը ասում է, թե Հայաստանը միջուկային ծրագիր ունի եւ պատրաստվում է այդ ծրագրերի իրագործումն ապահովող քաղաքական որոշում ընդունել: Ըստ Հասանովի, Հայաստանի միջուկային ծրագրերին մեծապես կարող են նպաստել միջուկային զենք ունեցող երկրներում բնակվող հայերը: Հասանովն ասել է նաեւ, թե Ադրբեջանը մտադիր է ահազանգել Ռուսաստանի կողմից Հայաստանին միջին հեռահարության հրթիռներ տրամադրելու հարցի կապակցությամբ:

Այս առնչությամբ «Ազատություն» ռադիոկայանի հայկական բաժնի թղթակիցը դիմեց Ռուսաստանի արտգործնախարարություն, որի փոխխոսնակ Վալերի Նեստերուկինը հայտարարեց, որ Ռուսաստանը չունի որեւէ տվյալներ Հայաստանի միջուկային ծրագրերի եւ նրա կողմից Մեծամորի ատոմակայանի հնարավորություններն օգտագործելու մասին: Ըստ Նեստերուկինի, Ռուսաստանը արդեն մի քանի տարի է, ինչ չունի միջին հեռահարության հրթիռներ, դրանք վերացվել են համաձայն Արեւմուտքի երկրների հետ կնքված պայմանագրերի:

ՇՐՋԱՆ

# Ասիական նոր իրավիճակ Անդրկովկասում

*Դա Թուրքիայից համապատասխան մոտեցումներ է պահանջում*

ՏԻԳՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ. Հայաստանի հետ հարաբերությունների հարցում Թուրքիան կանգնել էր երկընտրանքի առաջ: Երբ նա հարցի կարգավորման պատասխանատվություն էր հայտնում, Ադրբեջանն անմիջապես առարկում եւ հակադրվում էր նրան: Իսկ պատասխանատվությունից հրաժարվելու դեպքում իր դեմ էր հակադրում ԱՄՆ-ին, ենթարկվելով այսպես կոչված ամերիկյան ճնշումներին: Այս պայմաններում Թուրքիան ադրբեջանական իշխանությունների առարկությունները հաղթահարում էր ամերիկյան ճնշումների հետ եւ փորձում էր խուսանավել Բաքվի ու Վաշինգտոնի միջեւ: Դա Թուրքիային հնարավորություն էր տալիս շարունակելու երկխոսությունը Հայաստանի հետ, առանց դիվանագիտական հարաբերությունների:

Վերջին շրջանում, սակայն, Անդրկովկասն ականատես եղավ լուրջ տեղաշարժերի: Դրանց մեջ ասիական հարաբերությունների նշանակությամբ կարելի է առանձնացնել Կովկասն ու Միջին Ասիան ամերիկյան կենսական շահերի գոտի հայտարարելու Վաշինգտոնի նախաձեռնությունը, թեեւ «Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ բարեկամական հավատարմագրության եւ փոխօգնության մասին» պայմանագիրը կասկածի տակ դրեց վերոհիշյալ նախաձեռնության հաջողությունը: Դրա հետ ամրապնդվեցին Մոսկվայի դիրքերն Անդրկովկասում: Նա տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունը վերականգնելու լայն հնարավորություններ ստացավ: Սեծապես կանխվեց Անդրկովկասից Ռուսաստանի վտարման վտանգը: Փոխադարձաբար սահմանափակվեցին Ադրբեջանի իրավունքները միջազգային ասպարեզում պատասխանելու Թուրքիայի հնարավորությունները: Սակայն այդ ընթացքում, «Նյու Յորք թայմս ինտերնեյշնլի» պատկերավոր արտահայտությամբ, Ադրբեջանին հաջողվեց «բազում բարեկամներ նվաճել Արեւմուտքում»: Ադրբեջանի արեւմտամետ քաղաքականությունը վերածեց արեւմտյան կողմնորոշման, եւ նա հստակեցրեց Անդրկովկասում ամերիկյան շահերի արտահայտի իր դերը: Այլ կերպ ասած, Արեւմուտքի, առավել եւս ԱՄՆ-ի հետ Ադրբեջանի կապերը, որոնք մինչ այդ միջնորդավորված էին Թուրքիայով, ստացան ուղղակի բնույթ: Բնականաբար այդ կապերում թուլացավ որոշես միջնորդ Թուրքիայի նշանակությունը: Դա ոչ միայն Ադրբեջանում թուլացրեց վերջինիս դիրքերը, այլեւ լուրջ հարված հասցրեց նրա անդրկովկասյան քաղաքականությանը: Անդրկովկասում քաղաքական ակտիվության պահպանման անհրաժեշտությունը Թուրքիայի տեսանկյունից ենթադրում էր Հայաստանի հետ երկկողմ շփումների ակտիվացումը: Իսկ դրա լավագույն միջոցը սահմանային դռան բացումն է:

Տես էջ 8

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

# Ռումինիայի Սենատի նախագահը ժամանեց Երեւան

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ. Հոկտեմբերի 1-ին Երեւան ժամանեց Ռումինիայի Սենատի պատվիրակությունը Սենատի նախագահ Պետրե Ռոմանի գլխավորությամբ: Հյուրերին «Զվարթնոց» օդանավակայանում դիմավորեցին ՀՀ Ազգային ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը, փոխնախագահ Արա Սահակյանը, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա: Հոկտեմբերի 2-ին պատվիրակությանը կընդունեն ՀՀ նախագահը, վարչապետը եւ ԱԳ նախարարը, այնուհետեւ կկայանա մամուլի ասուլիս:

Հոկտեմբերի 3-ին պատվիրակությունը կմեկնի Բաքու:

«Լեռնային Դարաբաղում իրավի-

ճակը մնում է լարված, եւ մենք ամեն ջանք կգործադրենք, որպեսզի տարածաշրջանում հաստատվի իսկական խաղաղություն», Ազգային ժողովում հայտարարեց Պետրե Ռոմանը: Նա նշեց, որ Ռումինիան չի պատրաստվում միջամտել, սակայն հասկանում է այս հարցում գոյություն ունեցող բոլոր դժվարությունները: Պրն Ռոմանը հավաստիացրեց, որ դիվանագիտության բնագավառում արվում է ամեն ինչ իսկական խաղաղություն հաստատելու համար: Ըստ Սենատի նախագահի, շատ կարեւոր է կոնկրետ, իրատեսական նախագծերի, առաջարկությունների ներկայացումը: «Ռումինան ինչ էլ անի հեռավոր արեւելքից մինչեւ արեւմուտք, միշտ կլինի Հայաստանի կողքին», հայտարարեց Պ. Ռոմանը:

Աժ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Հովհաննես Իգիթյանը:

«Ռումինիան ներկայումս զարգացնում է իր հարաբերությունները Անդրկովկասի պետությունների հետ եւ այս այցը դիտում է որպես հաստատ քայլ այս երկու երկրների հարաբերությունների զարգացման համար: Մենք գտնում ենք, որ Ռումինիան կարող է կամուրջ հանդիսանալ Եվրոպական միության եւ այս տարածաշրջանի հաստատուն Հայաստանի միջեւ», լրագրողներին հայտարարեց Պետրե Ռոմանը:

Ռումինիայի պատվիրակությունը հանդիպեց Բ. Արարքցյանի, Գարեգին Ա Կաթողիկոսի հետ: Նախատեսվում է նրա այցելությունը Ծիծեռնակաբերդ, Մատենադարան, Փարաջանովի տուն-թանգարան, կոնյակի գործարան եւ

# «ԱրմենՏելի» համար որոշ հայեր նորից են ներկայացվել

ԼՈՆԴՈՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ. Ինչպես հաղորդեց Meryll Lynch ֆիրմայի ներկայացուցիչը, «ԱրմենՏել» ընկերության բաժնետոմսերի համար հայտեր ներկայացնելու գործընթացը «գրեթե ավարտված է»: Դրա հետ մեկտեղ նա ասաց, որ որոշ հայտեր ներկայացվել են նորից: Ներկայացուցիչը հրաժարվեց որեւէ այլ մանրամասնություն հայտնել: «Նոյյան տաղան» գործակալության տեղեկություններով, OTE հունական ընկերության նախագահ Դեմետրիոս Պապուլիասը Աթենքում հայտարարել է, որ «ԱրմենՏելի» վաճառքի վերաբերյալ վերջնական որոշումը սպասվում է հոկտեմբերի 15-ին: Կոնսորցիումը, որ գլխավորում է OTE ընկերությունը, «ԱրմենՏելը» ձեռք բերելու հիմնական հավակնորդներից մեկն է:

# Կիպրոսում նշում են Անկախության օրը

ՆԻԿՈՍԻԱ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Կիպրոսի Հանրապետության Անկախության օրվա առթիվ այսօր Նիկոսիայում տեղի է ունեցել ազգային զվարդիայի մեծ զորահանդես:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման համաձայն, զորահանդեսն ընդունել է նախագահ Գլավկոս Քլերիդեսը: Ազգին հղած ուղերձում նա նշել է երկրի պաշտպանունակության ամրապնդման անհրաժեշտությունը թուրքական զորքերի չդադարող սպառնալիքների առնչությամբ: Պետության ղեկավարը նաեւ արտահայտվել է Կիպրոսի եւ Հունաստանի համատեղ պաշտպանության հանձնաժողովի կենսագործման օգտին, որի համաձայն Աթենքը Կիպրոսին իր պաշտպանության տակ է առնում արտաքին ագրեսիայի դեպքում:

# Մեկ-ի Անվտանգության խորհուրդը սաստ է կանգնում ԵԱՀԿ Մինսկի գործընթացին

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ. ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանի հետ ՄԱԿ-ի կենտրոնակայանում տեղի ունեցած հանդիպման ժամանակ արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանը տեղեկացրեց, որ Հայաստանի կառավարությունն իր լիակատար աջակցությունն է հայտնում վերջինիս ներկայացրած ՄԱԿ-ի բարեփոխումների ծրագրին:

ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների վարչությունից հայտնում են, որ նախարար Արզումանյանը Կոֆի Անանին ներկայացրել է ԼՂ հակամարտության խաղաղ բանակցությունների գործընթացի վերջին զարգացումները: Կողմերը համաձայնեցին, որ հակամարտության խաղաղ կարգավորումը պետք է շարունակվի ընթանալ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում: Գլխավոր քարտուղարը հայտնեց, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը սաստ է կանգնում ԵԱՀԿ Մինսկի գործընթացին:

Հայաստանի արտգործնախարարը գլխավոր քարտուղարին հրավիրեց Հայաստան:

# Ցեղասպանության լուսանկարները վերջին ցուցադրվում են Նյու Յորքում

Սեպտեմբերի 29-ին ՀՅԴ Արեւելյան Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը հայտարարել է, թե էլիս կղզու թանգարանում վերջին տեղադրվել են Հայկական ցեղասպանության լուսանկարները եւ կից բացատրականները, որոնք իրավամբ «ցեղասպանություն» են որակում թուրքական կառավարության կազմակերպած 1915 թ. ջարդերը:

Նկարների ցուցադրման շուրջ համաձայնությունը կայացել է էլիս կղզու վրա հսկիչ Դայան Թեյսոնի եւ ամերիկահայ պատվիրակության հանդիպման ընթացքում: Հայկական պատվիրակությունը ներկայացրել են Հայ դատի հանձնախմբի, զույգ առաջնորդարանների, Հայ ավետարանական ընկերության եւ ՀԲԸՄ-ի լիազորները:

Արեւելյան Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի վարիչ Գրեյս Քեհեբյան-Քյուլեկյանը գոհունակություն է հայտնել որոշման կապակցությամբ եւ նշել, թե «ամերիկահայերը մեկ անգամ եւս փաստեցին, որ պատմական արդարությունը վերահաստատելու ուժ ունեն»:

# «Լինսի» հիմնարկի հերթական նվիրատվությունը՝ 250 հազար դոլար

«Լինսի» հիմնարկը հերթական 250 հազար դոլար գումարը նվիրեց Հայաստանեայց եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան թեմի «Երիտասարդաց ճամբարին եւ հարակից կենտրոնին», որը գտնվում է Կալիֆոռնիայի Դանլեի շրջանում:

Թեմի առաջնորդարանի Դիվանը տեղեկացրել է, թե մինչ այդ ստացված նվիրատվությունները օգտագործվել են հիմնական բարեկարգման աշխատանքներում, իսկ այս գումարը կծառայի ծնողների եւ երիտասարդների համար հարմարավետ պայմաններ ստեղծելուն:

«ԵՐԵՎԱՆ»

ԱՍՏ

# Վարչակազմը Ադրբեջանի դեմ 907 հոդվածը չկիրառելու ուղիներ է որոնում

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ. Սեպտեմբերի 30-ին ԱՄՆ-ի պետդեպարտամենտի խոսնակ Ջեյմս Ռուբինը լրագրողների հետ հանդիպման ժամանակ, պատասխանելով Ադրբեջանին օգնություն տրամադրելն արգելող 907 հոդվածի մասին հարցին, ակնհայտ կերպով հասկացրեց, որ վարչակազմը ուղիներ է որոնում Ադրբեջանի նկատմամբ այս օրենքը չկիրառելու համար:

«Այս սարսափելի հոդվածը գրվել է Սենատի կողմից Բուշի վարչակազմի օրոք, եւ մենք էլ մինչ այժմ չգիտենք, թե ինչ ենք անում: Բանի որ այդ օրենքով կարող ենք վարչակազմի ձեռքերը, թույլ չտալով իրական քայլեր կատարել այդ տարածաշրջանի խաղաղության գործընթացում: Իմ կարծիքով, դա ոչ անհրաժեշտ արգելք է»:

«Մենք չենք անտեսում օրենսդիր մարմնի պահանջները», ասաց Ռուբինը, նկատի ունենալով, որ վարչակազմը հարգում է Հայաստանի շրջափակումը վերացնելու հարցում Կոնգրեսի պահանջը, «սակայն չի կարելի այդպիսով վնասել ԱՄՆ-ի ազգային շահերը»:

«Ազատություն» ռադիոկայանը հաղորդել է, որ Ռուբինի կարծիքով վարչակազմը պետք է ունենա ազատ գործելու հնարավորություն որոշելու, թե արդյո՞ք այդ օրենքը չի վնասում ԱՄՆ-ի ազգային շահերը: Այս առումով նա ընդգծեց Կոսովոյի ավտոնոմիայի նախկին պատասխանատուների հարեւորությունն ամբողջ աշխարհի համար: «Արտաքին հաղորդակցության համար այդ օրենքը խնդրալի չէ», ասաց նա:

Ռուբինը նշեց, որ ԱՄՆ պետդեպարտամենտի քարտուղար Մադլին Օլբրայթն այդ տարածաշրջան այց կատարելու եւ նավթային ընկերությունների ղեկավարների հետ հանդիպումներ ունենալու ընթացքում հասկացավ, որ թիվ 907 օրենքը թույլ չի տալիս «ճկուն հաղորդակցություն վարել տարածաշրջանում: Եթե նավթային ընկերությունները ընդունում են մեր տեսակետը բանաձեւի մասին լավ է, սակայն ընկերությունները չեն, որ աշխատում են մեզ այդպիսի դիրք բռնել 907 բանաձեւի նկատմամբ», ասաց Ջեյմս Ռուբինը:

ԱԶԳ

# տեղական

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

## «Վահան Հովհաննիսյան+30» դատավարությունն ավարտվեց

*Դատավճռի օրը մնաց անորոշ*

Հոկտեմբերի 1-ի դատական նիստը, որը վերջինն էր «31»-ի դատավարության համար ավարտվեց Վահան Հովհաննիսյանի վերջին խոսքով: «Վերջին խոսք» ասվածն ավելի շուտ խաղաղական վերլուծություն էր: Չնայած դատական նիստը, նախագահողի դիտողություններին, որ Վ. Հովհաննիսյանը շեղվում է բուն թեմայից, վերջինս հիշեցրեց «մենք դրա համար ենք նստած, որ այս հարցում իշխանությունների հետ համաձայն չենք»:



Վ. Հովհաննիսյանը հայտարարեց, որ ինքը մեղադրանքից շեղվելու ցանկություն չունի, սակայն պետական մեղադրողի ճառը նույնպես ցույց տվեց, որ գործը մնում է խաղաղական դաշտում, քանի որ իրենք «բացահայտված, բայց չապացուցված հանցագործներ դուրս եկան» (Դավիթ Շահնազարյանի մի արտահայտության նմանությամբ): Բուն մեղադրական ճառին անդրադառնալով Վ. Հովհաննիսյանը նշեց, որ իրենք մեկուկես տարվա դատավարության ընթացքում դատաքննվել են «հայրենիքի դավաճանության» ու «ահաբեկչության» մեղադրանքից, սակայն վերջում դարձվեց, որ իրենք ընդամենը հեղաշրջման կոչեր անողներ են: Վ. Հովհաննիսյանը խրախուսեց դատախազ Չարխիֆալայանին, որն, ի տարբերություն իր գործընկերոջ, խիզախություն ունեցավ այդ դատավարությանը մասնակցելու մինչև վերջ եւ հոդվածների վերաձևակումով փրկեց դատախազության աշխատողներին ու իշխանություններին, բայց չկարողացավ ծերբազատվել «մունդիրից»...

Համենայնդեպս, նա պետական մեղադրողին հուշեց տարբերակել հետեւյալը: իրենք հակապետական էլեմենտ չեն, հակաիշխանական են եւ «նստած են, որովհետեւ ազգայնական են»: Իսկ իշխանություններից դժգոհելը ոչ մի արգելք չի հանդիսանում հայտարարեց, որ կարող է քարոզչի հանդիպեին եւ աղանդավոր դառնային, կարող է «Շամիրամին» անդամակցեին, «ի՞նչ գիտեմ զենքով հեղաշրջում էինք անելու, կարող է նաեւ վերադաստիարակվեինք»: Վ. Հովհաննիսյանը նշեց, որ իրենք դատվում են տոտալիտար ռեժիմի հատուկ հոդվածներով, ստիպված է հիշեցնել, որ ԽՍՀՄ օրենսգիրքն անգամ կոչեր անելը դեռեւս հանցանք չի համարում, եթե կոնկրետ քայլեր չես ձեռնարկել: Իսկ կոչ անելու համար տուգանք է նախատեսված, որը հենց վանդակներում նստած կարող են հավաքել:

Վ. Հովհաննիսյանն, իհարկե, իր վերջին խոսքի ամենակարեւոր մասը համարեց «դաչաղ» Կարոյի տանը «բազավորվելը», որն այս դատական գործի ծանրակշիռ մասն է կազմում, ինչպես նաեւ երկու ոստիկանների սպանությունը եւ առաջին անգամ լինելով յուրօրինակ վերլուծություն կատարեց ներկաների համար բացահայտելով մինչեւ օրս անհայտ մնացած այդ գործի խորհրդավոր մանրամասները:

Վերջին խոսքի ավարտից հետո դատավոր Դավիթ Ավետիսյանը ավետեց դատաքննության ավարտի մասին անորոշ թողնելով դատավճռի ընթերցման օրը:

Ս. Պ.

## Տարեցների կենսաթոշակները 400 դրամով ավելացնելու առաջարկ



ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ: ՀՀ սոցաշխատանքի նախարարությունը հոկտեմբերին առաջարկություն է ներկայացնելու ՀՀ կառավարությունը հոկտեմբերի 1-ից տարեցների կենսաթոշակը 400 դրամով, իսկ հունվարից՝ մոտ 650 դրամով բարձրացնելու համար: Այս մասին հոկտեմբերի 1-ին ՀՀ սոցաշխատանքի նախարարությունում տեղի ունեցած «Տարեցների միջազգային տարին նշելու նպատակով ստեղծված հանձնաժողովի» առաջին խորհրդակցության ժամանակ ասաց սոցաշխատանքի նախարար Հրանուշ Հակոբյանը:

Խորհրդակցության ժամանակ առաջարկվեց աշխատունակ տարեցներին ընդգրկել տնայնագործական արտադրության մեջ եւ հնարավորություն ընձեռել նրանց ինքնուրույն վաստակել իրենց միջոցները: Նախարարը, սակայն, դատապարտեց, որ նախարարությունը դրան ֆինանսապես օժանդակել չի կարող: Ըստ Հ. Հակոբյանի, տարեցների թիվը ներկայումս Հայաստանում հասնում է 667 հազարի:

ՀՀ նախագահը 1997 թ.-ի օգոստոսի 15-ին ստորագրել է հրամանագիր, որտեղ նշվում է, որ երկամյա ժամկետում անհրաժեշտ է հաստատել միայնակ տարեցների եւ հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական տպասարկումը բարելավելու ծրագիր: ՀՀ սոցաշխատանքի նախարարությունում այդպիսի ծրագիր ստեղծվել է, ըստ որի մի շարք ծառայություններ անվճար տրամադրվելու են բոլոր միայնակ ապրող 75 եւ անց կենսաթոշակառուներին, առաջին եւ երկրորդ կարգի միայնակ հաշմանդամներին, միայնակ հաշմանդամներից կազմված ընտանիքներին, եթե նրանք չունեն չափահաս, աշխատունակ հարազատներ: Ծրագիրը ֆինանսավորվելու է պետության կողմից:

## Կոթիում կբացվի Բաղրամյանի հուշարձանը

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Դեկտեմբերի 2-ին լրանում է հայ մեծ զորավար Հովհաննես Բաղրամյանի 100-ամյակը: Այդ օրը Տավուշի մարզի սահմանամերձ Կոթի գյուղում կբացվի զորավարի կիսանդրին: Սեպտեմբերի 20-ին Կոթիում ազատամարտիկների հուշարձանի բացման ժամանակ այս մասին հայտարարել է «Մարշալ Բաղրամյան» հիմնադրամի նախագահ գեներալ-մայոր Ռաֆայել Կարապետյանը: Արդեն պատրաստ է զորավարի բրոնզե կիսանդրին: Մարշալ Բաղրամյանը 1976թ. Կոթի կատարած այցելության ժամանակ հայտարարել է, որ իրեն կոթեցի է համարում, քանի որ ժամանակին իր պարը այստեղից է գաղթել Դաշտային Ղարաբաղի Չարդախլու գյուղ:

## Երեւանյան սեմինարին մասնակցելու իրավեր են ստացել նաեւ Ադրբեջանի ժուռնալիստները

ԲԱԿՈՒ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ինչպես գրել է Բաքվի «Ազադլըղ» թերթը, Հելսինկյան վեհաժողովի կողմից հովանավորվող «Լրատվության միջոցների հովանավորումն Անդրկովկասում» ծրագրի մաս կազմող ժուռնալիստների չորրորդ սեմինարը տեղի է ունենալու հոկտեմբերի 18-20-ը Երեւանում: Այդ սեմինարին մասնակցելու իրավեր են ստացել արդեն վեց ադրբեջանցի ժուռնալիստներ: Հրավիրվածների թվում են աբխազական եւ հարավօսական համայնքների, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի հայ եւ ադրբեջանցի ներկայացուցիչները: Այդ սեմինարին ներկայանալու են միջէթնիկական հակամարտությունների կարգավորման գործում ժուռնալիստների դերի եւ 21-րդ դարի զանգվածային լրատվության միջոցների խնդիրները:

Այդ ծրագրի շրջանակներում հաջորդ՝ հինգերորդ սեմինարը հավանաբար տեղի կունենա Բաքվում, նոյեմբեր-դեկտեմբերին:

ԵՐԵՎԱՆ

## Հայ երիտասարդները բողոքում են Օսմանյան կայսրության 700-ամյակը ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում նշելու փորձի դեմ

ԵՐԵՎԱՆ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ: Սեպտեմբերի 30-ին Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների հավաք-խորհրդակցության ժամանակ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր կոմիտեին ուղղված բողոքի ուղերձ է ընդունվել: Առիթ է ծառայել այն փաստը, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր կոմիտեն հոկտեմբերի 6-17-ը կայանալիք իր նիստում մտադիր է քննարկել 1999 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի հոբելյանական ձեռնարկների ծրագրի մեջ Օսմանյան կայսրության 700-ամյակը ընդգրկելու հարցը:

«Հայաստանի ուսանողական եւ երիտասարդական կազմակերպությունները իրենց բողոքն են հայտնում մարդկությանը միայն աղետներ բերած, հնագույն խաղաղարարություններ ոչնչացրած եւ բազմաթիվ ժողովուրդների բնաջնջման ենթարկած կայսրության կազմավորման հոբելյանի նման բարձր հովանավորության փորձի դեմ», ասվում է ուղերձում:

«Նման նկարագիր ունեցող պետական կազմավորման հոբելյանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորության պատվին արժանացնելը կդիտվի համաբարհային արժեքների դեմ կատարվող քայլ, մարդկության դեմ Օսմանյան կայսրության իրագործած ոճիրների սրբագրում, անարգանք ցեղասպանության ենթարկված ժողովուրդների նկատմամբ»:

Ուղերձում երիտասարդությունը հույս է հայտնում, որ հանուն մարդասիրական սկզբունքների պահպանման, ի խնդիր խաղաղակիրք աշխարհի առաջընթացի եւ արդարության, ՅՈՒՆԵՍԿՕ-ն դեմ կլինի հոբելյանական օրացույցում Օսմանյան կայսրության հիմնադրման 700-ամյակը ընդգրկելու Թուրքիայի առաջարկին:

Բողոքի ուղերձը հանձնվելու է նաեւ Հայաստանում գործող դեսպանատներին եւ միջազգային կազմակերպություններին:

Խորհրդակցության ժամանակ ստեղծվեց նախաձեռնող խումբ, որը մշակելու է գործողությունների ծրագիր՝ ուղղված Օսմանյան կայսրության հոբելյանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում նշելու փորձի դեմ: Նախատեսվում է, որ կլինեն ուսանողական-երիտասարդական հանրահավաքներ, բողոքի երթեր:

## Հոկտեմբերի երրորդ կիրակին՝ «Զեյթունի օր»

Շատերն են համտես արել մուսալեռցիների հարիսան: Դա նաեւ զեյթունցիների ավանդական ճաշատեսակն է, բայց քանի որ արդեն «գրավված է», վերջիններս որոշեցին մատուցել մեկ ուրիշ ազգային ճաշ՝ խյուֆթա: Թե երբ եւ ինչ առիթով, իմանում ենք հետեւյալ հայտարարությունից.

«Հարգելի զեյթունցի հայրենակիցներ, 1997 թվականի հոկտեմբերի 19-ին մեծ շուքով նշվելու է Երեւանի Նոր Զեյթուն թաղամասի հիմնադրման եւ հայրենադարձության 50-ամյակը: «Զեյթուն» հայրենակցական, բարեգործական ու մշակութային միությունը հրավիրում է հայրենիքում եւ սփյուռքում ապրող բոլոր զեյթունցիներին մասնակցելու այդ տոնակատարությանը: Խնդրում ենք մասնակցության մասին նախապես հայտնել Երեւանի «Զեյթուն-Քանաքեռ» համայնքի նախագահ պարոն Ռուբեն Սինոյանին, հեռ.՝ 25-41-06:

«Մենք որոշել ենք ամեն տարի հոկտեմբերի 3-րդ կիրակին ավանդաբար նշել որպես «Զեյթունի օր», ասում է «Զեյթուն» հայրենակցականի նախագահ, քիմիական գիտությունների դոկտոր Դանիել Գայբակյանը, դրանով մենք անմոռաց կոչահենք այն քաջորդիների հիշատակը, ովքեր ավելի քան 5 դար անառիկ են պահել իրենց արժվաբույնը թուրք ագրեսորների հարձակումներից: Մեր հերոսապատումների ոգեկոչումով նոր լիցք կհաղորդենք հայրենիքի պաշտպաններին ու նաեւ աշխարհով մեկ սփռված մեր հայրենակիցներին՝ ազգային ինքնության պահպանության գործում»:

ՄԻՀՐ ԳԱՆԻԵԼՅԱՆ

## Քաղաքապետը անհանդուրժելի է համարում վերադարձը հովհարային անջատումների

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ: Երեւանի քաղաքապետ Վանո Սիրադեղյանը կարծիք է հայտնել էլեկտրաէներգիայի դիմաց կուտակված պարտքերի պատճառով հովհարային անջատումների գրաֆիկի վերականգնման անհանդուրժելիության (այլ ոչ թե անհրաժեշտության) վերաբերյալ: Տեխնիկական պատճառներով (լուրը Երեւանի քաղաքապետարանից ստացվել է ֆաքսով, վաս ընթեռնելի տեսքով) սեպտեմբերի 30-ին «Նոյյան տաղանի» կողմից առաքված այս լուրի մեջ տեղ է գտել սխալ՝ անհանդուրժելիություն բառը վերծանվել է որպես անհրաժեշտություն: Գործակալությունը ներողամտություն է հայցում բոլոր գործընկերներից եւ ընթերցողներից նման սխալի համար:

## «Նաիրիտ» արդեն գերազանցել է նախորդ տարվա արտադրության ծավալը

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ: Հոկտեմբերի 1-ի դրությամբ «Նաիրիտ» Գիտաարտադրական Միավորումը թողարկել է գրեթե նույն ծավալի արտադրանք, ինչ ողջ նախորդ տարվա ընթացքում: Անցած 9 ամիսներին արտադրվել է 1 միլիարդ դրամի (2 մլն դոլարի) կառուցուկ: Այս մասին հայտնեց միավորման գլխավոր տնօրեն Գագիկ Ներսիսյանը: Ըստ նրա, անցյալ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ արտադրանքի ծավալը կազմում է 132,1 տոկոս: Նա ընդգծեց, որ աճը եղել է արտադրական ծավալների մեծացման հաշվին՝ բացառելով գների աճը: ՀՀ վիճակագրության հրապարակման համաձայն, նախորդ տարվա արտադրական ծավալները գերազանցած 91 ձեռնարկություններից արտադրանքի ֆիզիկական ծավալի ամենաբարձր ինդեքսը գրանցվել է «Նաիրիտում»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

# ԱՍՈՒԼԻՍ

ԻՄ

## Նախագահը մտածելու շատ բան ունի

### *Իսկ աջակողմյան կուսակցություններն պետք է համեմատվեն ԻՄ-ի հետ, գտնում է Պարույր Հայրիկյանը*

Երեկվա ասուլիսային «բումից» անմասն չէր Պարույր Հայրիկյանը, որը լրագրողներին մասնավորապես հիշեցրեց «ինքնորոշման իրավունքի կիրառման շուրջ հավաքված մարդկանց առաջին դահլիճի» ԱԻՄ-ի եւ 1987 թ. հոկտեմբերի 24-ին (ՄԱԿ-ի օրը) լույս ընծայված «Անկախություն» թերթի «բացառիկ» դերը անկախության նկատմամբ վախը հաղթահարելու գործում: ԻՄ-ն ի սկզբանե հակադրվելով ծախակողմյան կոմունիստական իշխանություններին, ստանձնեց աջակողմյան կուսակցության դերը, եւ եթե հետագայում ստեղծված ու ժամանակ առ ժամանակ գունափոխվող, ինչպես նաեւ ընդգծված ծախակողմյան կուսակցություններ (օրինակ Հնչակյան կուսակցությունը) համարվում են աջակողմյան, դրանով փչացնում են մի ամբողջ սերունդ եւ մանավանդ արժեզրկում հայոց լեզուն, ասաց Պարույր Հայրիկյանը եւ ավելացրեց. «Եթե որեւէ մեկը սրանից հետո ասի, որ աջակողմյան է, պետք է համեմատվի ԱԻՄ-ի հետ»:

ԻՄ նախագահի կարծիքով, երկու միավորումների («Հանրապետություն» բլոկի եւ ԱՀԴ-ի) լուծարումը Հայաստանում քաղաքական կյանքի ձեւավորման իրական հնարավորություն է ստեղծում: Ըստ նրա, առաջիկա խորհրդարանական ընտրություններ կաղացուցեն, որ մեզանում կան 5-30 տոկոս հետեւորդներ ունեցող 5-6 կուսակցություններ, որոնց վարկանիշը, հասարակական կարծիքի ԻՄ վերջին հարցումների համաձայն այսպիսին է. ԱԺՄ 14 տոկոս 1995 թ. հարցումների II տոկոսի փոխարեն (ինչի համար Հայրիկյանն ուրախ չէ), ԱԻՄ 12.18 տոկոս 11.78-ի փոխարեն, կոմկուս 15 տոկոս նախկին 9-ի փոխարեն (ինչի համար ԻՄ նախագահը տասնապատիկ տխուր է), ՀՅԴ 6 տոկոս, ՀՀՇ 5 տոկոս 12-ի փոխարեն: Նույն հարցումներից հետեւում է, որ Հայրիկյանի վարկանիշն անփոփոխ է (14.7 տոկոս), մինչ «Լեւոն Տեր-Պետրոսյան քաղաքական գործիչը մտածելու շատ բան ունի՝ նրա վարկանիշն իջել է 4 անգամ, 51-ից հասնելով 14.4 տոկոսի»:

ԻՄ նախագահը քննադատեց «քաղաքական գործիչներից մեկին» որը հայտարարել էր, թե 91-ի ընտրություններն արդար են եղել՝ անտեսելով Պառավաքարը, եւ նշեց, որ Հայաստանում առ այսօր ընտրություն չի եղել, նույնիսկ անկախության հանրաքվեի 99 տոկոսը չափազանցված էր: Նա ափսոսանք հայտնեց, որ նախագահն իր ասուլիսում չի խոսել Հայաստանում ժողովրդավարության բացակայության մասին եւ վտանգավոր համարեց նախագահի կեցվածքը Ղարաբաղի հիմնահարցում, որը, նրա կարծիքով, «աղահով լինելն է»՝ աննպաստ դայմաններում արդարանալու տեղ ունենալը:

Դահլիճը լուծարված է, եւ դրանից ողբերգություն չպետք է սարքել: Պարզապես նախընտրական նպատակով ստեղծված կառույցը չհաջողվեց տեւական կառույց դարձնել: Իսկ հետագա դահլիճները պետք է կայանան Հայաստանում հայ մարդու լիակատար ազատության ապահովման գերխնդրի շուրջ, քանզի Հայաստանը թեեւ բռնապետական երկիր չէ, սակայն առաջիններից է ժողովրդավարության նկատմամբ քամահրական վերաբերմունք ունեցող երկրների շարքում, ասաց Հայրիկյանը: Նա կտրականապես ժխտեց նախագահի հետ գաղտնի հանդիպելու վարկածը: «Կանացի բամբասանքին համարժեք այդ շահարկումն է ժանգոտում է քաղաքական գործչին», ասաց նա՝ մերժելով նաեւ առաջինը լինելու մարմաջի դրսեւորով դահլիճը քանդելու մեղադրանքը: Հարցերին դրատասխանելիս ԻՄ նախագահը կշտամբեց «Առավոտ» թերթին իր հասցեին «ծանր վիրավորանքներ տպագրելուց առաջ վաստերն ստուգելու դարկնշտություն» չունենալու համար, իսկ «Նոյյան տապանի» թղթակցին հայտնեց, որ Ամերիկայում գործակալության համարումն անկում է ապրել: Վահան Հովհաննիսյանի դատի վերաբերյալ իր տպավորության մասին «ԱՐ»-ի հարցին դրատասխանելով, Պարույր Հայրիկյանը նշեց, որ «տպավորությունը ծանր է»:

Վերջում հայտնեցինք, որ ԻՄ տասնամյակը շուտով կնշվի ընդունելությունների տանը միջոցառմանը կհրավիրվեն դրաշնատարներ, օտարերկրյա դիվանագետներ եւ որոշ հեղինակավոր լրատվամիջոցների ղեկավարներ:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՅԴ

## Դաշնակցությունը միակարծիք Ղարաբաղի հարցում

Թվում էր, թե Դաշնակցության Գերագույն մարմնի ներկայացուցիչները երեկ հրավիրած մամուլի ասուլիսում պետք է վերջնականապես հստակեցնեին, թե իշխանություններ-ՀՅԴ բանակցությունները ինչպիսի փուլում են եւ կոնկրետ ինչպիսի դայմանավորվածություններ են ձեռք բերել: Սակայն ՀՅԴ Գերագույն մարմնի քաղաքական ներկայացուցիչ Ռուբեն Հակոբյանը բավարարվեց ասելով, որ իրենք դիրքերը չեն զիջելու, գրպանի կուսակցություն չեն դառնալու, իսկ մոտ ապագայում սպասվում է նաեւ ավելի բարձր մակարդակի հանդիպում, ըստ երեւույթին նկատի ունեին հանրապետության նախագահին: Ինչ վերաբերում է կուսակցության «լեգալացման» ընթացքին, ապա կրկին փաստվեց, թե կատեգորիան քաղաքական որոշում էր, իսկ ՀՅԴ «լեգալացումից» կշահեն եւ իրենք, եւ ժողովուրդը, եւ իշխանությունները: Մի անգամ եւս ժխտվեցին ՀՅԴ շարքերի եւ ղեկավարության դրատակման մասին գնահատականները: Ռուբեն Հակոբյանը նշեց, թե այդպիսով ԱԺՄ-ն փորձում է սեպ խրել Դաշնակցության մեջ, նկատի ունենալով Դավիթ Վարդանյանի ասածը:

Դահլիճի հարցում ՀՅԴ ներկայացուցիչը նույնպես չհամաձայնեց ԱԺՄ ղեկավարի հետ, հայտարարելով, որ Դահլիճը մեռած չէ, այլ, ըստ կանոնագրի, դադարեցրել է գործունեությունը: Ընդ որում, Դահլիճի նման վախճանը համարելով բնական, Ռուբեն Հակոբյանը չցանկացավ խոհանոցին անդրադառնալ, բայց նաեւ հնարավոր համարեց նոր դահլիճի ծեւավորում, ուր կլինեն այնպիսի կուսակցություններ, որոնք գոնե ֆիզիկապես իրար կհանդուրժեն:

Ղարաբաղի խնդրում Լեւոն Տեր-Պետրոսյանի դիրքորոշումը համարվեց վտանգավոր, քանի որ, ըստ Ռ. Հակոբյանի, չի կարելի Արցախի ազատագրական շարժումը հակադրել սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը: Ու քանի որ ավելի մանրամասն լուծման տարբերակներ չառաջարկվեցին, բայց նաեւ համաձայնություն տրվեց Վահան Հովհաննիսյանի վերջին խոսքում արված մեկնաբանություններին, ի դատասխան մեր հարցի, Ռ. Հակոբյանը նշեց, թե կուսակցության մեջ եւ ղեկավարների շրջանում չկա մեկը, որ այդ հարցում տարբեր կարծիք հայտնի եւ միանգամայն ընդունելի են Վ. Հովհաննիսյանի առաջարկած մեխանիզմները: Ուստի որոշեցինք այս հարցում մեջբերել հենց Հովհաննիսյանի կարծիքը (մեջբերումն ըստ «Հայոց աշխարհի»).

«Ո՞ւր է երաշխիքը, որ զիջելով մեկ շրջանի մեկ գյուղ Ադրբեջանին կամ ամբողջը զիջելով՝ մենք կստանանք բաց երկաթգիծ: Չենք ստանա: Սր բան հասկացեք խաբում են մեզ: Էլի մի քանի թուրք հոգի կին կդառնեն ռելսերի վրա, եւ ՄԱԿ-ի դիտորդները այս անգամ կասեն՝ դե մենք ի՞նչ անենք, ձեր գնացքները մենք չենք կարող անցկացնել: Մեզ կխեղդեն, եթե մենք տանք Ղարաբաղը: Ոչ մի տարբերակ, ի՞նչ փուլային...

Ղարաբաղի կարգավիճակը տալիս ես մեզ թղթի վրա՝ երաշխավորված միջազգային համայնքի, ՄԱԿ-ի եւ այլ նման կազմակերպությունների կողմից, բացում ես երկաթգիծը՝ մենք մի տարի աշխատեցնում ենք, տեսնում ենք, որ իսկապես գործում է, նավթամուղը սկսում ենք կառուցել մեր տարածքով, հետո մենք տալիս ենք Ֆիզուլին: Նավթամուղի 1 կմ կամ 100 կմ էլ կառուցում ենք, տալիս ենք Ֆիզուլիի երկրորդ կեսը, Աղդամն ենք տալիս, իհարկե կան բաներ, որ չենք տալու:

Սա պետք է լինի մոտեցումը, ի՞նչ փուլային կամ փաթեթային: Դուք դրանց տարբերությունը հասկացա՞ք: Ես չհասկացա: Ես միայն հասկացա, որ երկու դեպքում էլ մենք տալիս ենք, իսկ մեզ՝ չէ: Մենք տալիս ենք Ղարաբաղը, իսկ մեզ տալիս են քացի...»:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

## Ասուլիսային պինգպոնգ Հայաստանում

Ասուլիսային տենդը Հայաստանում հասել է իր գագաթնակետին: Այսօր արդեն ասուլիսներ են հրավիրում բոլորը «վասակաբատները» եւ «անվասակները», «խելոքները եւ հիմարները», «կառուցողականները» եւ «արմատականները»... Ընդ որում, լրագրողների հետ հանդիպումների դարբերականությունը համառորեն ձգտում է երեւակայելի զրոյի, ասուլիսը դարձնելով քաղաքական մթնոլորտ, իսկ լրագրողին թթվածին: Այսօր փայտոջիլի անընդհատ վախճանը յուրաքանչյուր բերումով կարող է դառնալ մի կարեւորագույն առիթ անհապաղ ասուլիս հրավիրելու: Ինչ խոսք, սա ընդհանուր առմամբ անառողջ երեւույթ է փակուղային կացության վկայագիր...

Ամեն բան սկսվեց 1995-ի հուլիսի 5-ից... ադոռինի հավաքված խորհրդարանը փաստորեն կարողացավ զրկել հանրապետությունում առկա հիշ թե շատ առողջ եւ գլխավորապես իրոք ընտրված ուժերին համապատասխան գործունեության դաշտից՝ նրանց դուրս մղելով երկրի քաղաքական, տնտեսական եւ սոցիալական կյանքից: Մնալով անլծակ, սակայն միեւնույն դեղքում գործող ուժ, շատերը այլընտրանքի բացակայության դայմաններում սխիզված եղան նորեն «դիմել ժողովրդին», քանզի սոսկ բնակչությունն է մնում տարբեր կազմակերպությունների գործունեության միակ հիմքը:

Ուստի եւ սկսվեց հայրենական հանրահավաքների երրորդ փուլը, որը բավական արագ ինքնատդառվեց

(սա բնական է) իր տեղը զիջելով ասուլիսներին: Եվ եթե անցյալում գրեթե ամեն շաբաթ հանրահավաք էր անցկացվում, ապա այսօր արդեն, յուրաքանչյուր շաբաթ մամուլի ասուլիս է հրավիրվում: Առաջին հայացքից, ինչ կա որ, եթե կա իրավունք: Ինչ խոսք, այդպես է, սակայն երեւի թե իմաստ կա նաեւ խոսել այն հետեւանքների (գոնե մեկ-երկու) եւ արդեն առկա գործընթացների մասին, որոնք հետեւանք են նման հաճախակի հանդիպումների:

Նախեւառաջ, նման միջոցառումների գերակշիռ մեծամասնությունը, բոլոր դեպքերում, «ասուլիս» չէ, անառիթ, անփաստաթուղթ, անդատրաստ...

Քաղաքական մակերեւույթին դահդանվելու միակ հնարավորություն: Անընդմեջ ասուլիսները բացնում են ինչպես լրագրողներին, այնպես էլ ասուլիս հրավիրողներին: Միեւնույն ժամանակ գոյացել է ֆունկցիոնալ մի փոխկապակցվածություն երկու կողմերի միջեւ, որի հիմքը, կրկնենք, անառողջ է: Մասնավորապես, Պարույր Հայրիկյանի դեպքում մեկը, ով ոչ վաղ անցյալում շատ-շատերին ներկայանում էր ոչ միայն ազգային հերոսի, այլ նաեւ ինչ-որ դիցաբանական կերպարի տեսքով, այսօր իր անընդմեջ ասուլիսների «շնորհիվ» անգթորեն վատնում է երբեմնի կշիռը, եւ նույնը կարելի է ասել նաեւ ուրիշների մասին:

Միեւնույն ժամանակ, իրոք, կարեւորագույն նշանակության դայմանագրերի կնքման ժամանակ եւ հատկապես այդ առթիվ հրավիրված ասուլիսներին դժվար է 6-7 լրագրողից շատ մարդ հաշվել: Մասնավորապես, երկու օր առաջ Հայաստանի ոսկու հանքերի շահագործման վերաբերյալ մեզ համար բախտորոշ դայմանագրի նախնական տարբերակի ստորագրման արարողությանը եւ ասուլիսին ներկա էին ընդամենը յոթ լրագրող: Համաձայնենք, որ տվյալ ասուլիսին քննարկվելիք հարցերը անհամեմատ ավելի կարեւոր են մեր հանրապետության ներկա եւ ապագա կյանքի կերտման գործում: Երեւի թե առավելապես նման հարցերը պետք է դառնային հասարակական կարծիքի ձեւավորող գործոն եւ քննարկվեին ավելի հաճախ. բան «ասուլիսային» այն պինգպոնգի «ասելիքը», որն անձնական վնասի տեսքով հանգրվանում է մամուլի էջերին:

ԱԲԵՍ ՂԱՋԱՐՅԱՆ

## Սրամ Սարգսյանն էլ հնարավոր է համարում նոր դահլիճի ստեղծումը

Լեւոն Տեր-Պետրոսյանի ասուլիսի՝ «շաբաթական լիցքով» սկզբնավորված ասուլիսային շարքը երեկ, ժամը 14:00-ին, Ժուռնալիստի տանը, գտավ իր ժամանակավոր հանգրվանը, որի դերն էր «Ի դատասդանություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» համահայկական համաժողովի կազմկոմիտեն՝ Սրամ Սարգսյանի գլխավորությամբ: Կոմիտեն հանդես եկավ մի հայտարարությամբ (սեդտեմբերի 26-ի ասուլիսի վերաբերյալ), որում նորից քննադատվում էր Լեւոն Տեր-Պետրոսյանի ասելիքը, սակայն նշվում է, որ «Հայ ժողովրդի ազգային-ազատագրական դայքարը շարունակվում է...»: Փաստորեն Լեւոն Տեր-Պետրոսյանի, չասենք դուդուկի՝ եղջերափողի ազդով, հանրապետության գոնե կենտրոնական հատվածում սկսվեց մի որս, ուղղված ՀՀ նախագահի խոսքի յուրահատկությունների հետեւերով:

Սրամ Սարգսյանը (ի դեպ, չբոնանալով որեւէ մեկի ընտրության ազատության վրա) նշում է, որ մինչեւ օրս Լեւոն Տեր-Պետրոսյանի ասելիքի ենթատեքստում շատերը (նաեւ լրագրողները) փորձում են գտնել ռացիոնալ մի հատիկ, որ նա խոհեմ եւ բանիմաց քաղաքական գործիչ է: Այնուամենայնիվ, ըստ ՀԴԿ նախագահի, Լեւոն Տեր-Պետրոսյանի խոսքի ամեն մի վանկը (դատկերավոր ասած) դայմանավորված էր «այն անձնական դարտավորությամբ, որ նա ունի տարբեր ատյանների առջեւ»:

Սրամ Սարգսյանի կարծիքով, Լեւոն Տեր-Պետրոսյանի «փայլուն վերլուծականի» որոշ դրույթներ ուղղակիորեն վտանգում են նաեւ ՀՀ եւ դաշնակից երկրների (Ռուսաստանի եւ Իրանի) փոխհարաբերությունների կայունությունը, հատկապես «ԵԱՀԿ եռանախագահության դրույթներին հետեւելու» շրջանակներում:

Ընդդիմադիր նոր դահլիճի կազմակերպությամբ դրն Սարգսյանը նշեց, որ նման բան իրոք հնարավոր է, քանզի ՀՀ իշխանությունների որդեգրած ծրագիրը հակազգային է եւ հետեւաբար «հակաղարաբաղյան»: Ուստի եւ չի բացառվում, որ դա շարժառիթ դառնա ժողովրդական նոր շարժման, որի ղեկավարողը կարող է լինել մի նոր միավորում: Ընդ որում ոչ թե նախընտրական դահլիճ, այլ հենց քաղաքական միավորում՝ իր ծրագրով եւ սվերային կաբինետով: Պարոն Սարգսյանը հարկ համարեց նշել Համահայկական համաժողովի եւ ՀՀ իշխանությունների համագործակցության անհրաժեշտության մասին, ընդգծելով, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի ճիշտ լուծումը հնարավոր է միայն իշխանությունը փոխելու դեպքում:

Ա. Ղ.

## Ի լուր լրագրողների

*Մամուլի ազգային ակումբը «Տնտեսական ուղեծիր» ծրագրի շրջանակներում լրագրողներին հրավիրում է հանդիպման ՀՀ հարկային տեսչության դեսդրոն Արտաշես Թումանյանի հետ:*

*Հանդիպումը կկայանա ուրբաթ՝ հոկտեմբերի 3-ին, ժամը 12-ին ՄԱԿ-ի հասարակական տեղեկատվության սրահում (Լիբկնեխտի 14):*

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ

ԱԶԳ

# ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂ

## Եթե ջրասարը վերանորոգվի, եթե Սևանը ջուր տա...

*Նոր Ամանոր իր «արհեստական» ու խրթին հարցերով*

Նոր Ամանորը Աշտարակի ենթաշրջանի վերջին գյուղն է: Այնման էլ ծայրամաս չէ, բայց գյուղն Աշտարակ քաղաքի հետ կապող միակ ավտոբուսը շաբաթվա մեջ մեկ անգամ է գալիս: Գյուղացիները ինքնամփոփվելով հարեւան Թալիշ գյուղով: Եվ քանի որ գյուղը Արզնի-Շամիրամ ջրասարի վերջնամասում է գտնվում, անբնական չի համարվում նաեւ, որ հինգ գյուղերի կենսատու աղբյուր հանդիսացող ջրասարը կարող է ջրից զրկել միայն Նոր Ամանորին: Սակայն, իրականում գյուղի ողբերգությունը հենց այդտեղից է սկսվում:

Նախկինում Նոր Ամանորում չեմ եղել, ուստի տեղացիների նկարագրած կանաչ-դրախտավայրի եւ միրգ ու բանջարեղենի առատությունից ծանոթ գյուղի մասին փորձում եմ պատկերացում կազմել նրանց պատմածով: Իսկ իմ տեսածն ամայություն է, գյուղացիների հիշատակած խաղողի փարթամ այգիներից տեղ-տեղ կիսականաչ ծյուղեր են պահպանվել, որոնց երկարությամբ ծգվող հենասյուներն ու լարերը վաղուց ավելորդ են դարձել: Գյուղացիների ինքնամբ՝ 105 հա, իսկ գյուղապետի ասելով՝ 92 հա խաղողի այգիներից միայն 30 հա չորացած ծյուղեր են մնացել: Իսկ 87 հա՝ պտղատու (դեղձ ու խնձոր) այգուց ոչինչ չկա՝ առտավայրի է վերածվել, նույնը վերաբերում է նաեւ ջրում են մուծել՝ մշակում ես, չես մշակում՝ պետք է մուծես, հարկերի ու տուրքերի հարցը կառավարությունը թող լուծի», ասում է գյուղապետը՝ մի պահ կարծես մոռանալով, որ այդ մեկ անգամն էլ սելավի ջրով են ոռոգել եւ ինքն էլ հավատել է՝ «դա արդյունք չէ, բերքի լրիվ կորուստ ենք տվել»: Այդուհանդերձ գյուղապետը չվճարողներին մի ելք է առաջարկում՝ դիմում գրեմ, հրաժարվեմ հողից: «Հողը շալակած մա՞ն եմ տալիս, իր տեղում է՝ թող գնա վերցնի», սա էլ գյուղացիների անկեղծ ու անմիջական պատասխանն է գյուղապետին:

ՀՀ կառավարության կողմից հարցի լուծմանը Նոր Ամանորում վաղուց են սպասում: Երբ ծեռները դրամ է ընկել՝ հավաքվել-գնացել են գանգատի՝ մարզպետարան, գյուղնախարարություն, ՀՀ կառավարություն, ուր վերջին դիմումը հունիսի 6-ին են հանձնել՝ ոռոգման ջրից բացի նաեւ խմելու ջրի ու արծարծված այլ հարցերի վերաբերյալ պատասխան ակնկալելով: «Պատասխան նամակում խմելու ջրի մասին ոչինչ չկար, իսկ ոռոգման ջրի համար գյուղապետն էր մեղադրվել» եւ վերջ: Մեկ ամիս առաջ նաեւ Արագածոտնի մարզպետարանի հանձնախումբն էր այցելել: Ուսուցիչները զայրույթով վերհիշեցին նրանց այցը՝ մարզպետը նայել է շուրջբոլորն ու ձեռը թափ տվել՝ «արհեստական գյուղ է...»: Եթե արհեստական է, ինչո՞ւ են ձեռից տված այգիների փոխարեն նորը հիմնելու առաջարկ անում:

Վիրավորանքը չէին կարողանում կուլ տալ: Ճիշտ է, գյուղը հիմնվել է 21 տարի առաջ՝ կարեն Դեմիրճյանի նախաձեռնությամբ: Տեղանքը նոպասավոր է եղել եւ բարեբեր՝ իմիջիայլոց սովխոզ հիմնելու համար: Անունը հենց այդպես էլ կոչել են «2-րդ սովխոզ», իսկ հիմա սովխոզները վերացնելու հետ անունն էլ փոխեցին՝ Նոր Ամանոր: Սակայն նոր անվանումը իրավիճակը չփոխեց, սովխոզները վերացվել են, չէ՞, «արհեստական գյուղն» էլ ինչո՞ւ պահպանել... «Արհեստակա՞նը» որն է, չէ՞ որ գյուղը բարիք էր ստեղծում: Հո հենց այնպես չեն գյուղ հիմնել, շենքեր կառուցել՝ խաղաքաղաքի, երկիրկանի, մուսֆերով...

Գյուղացիների ասելով՝ շեն ստեղծություն են եղել՝ զուտ իրենց ստեղծած բերքի ու բարիքով հարստացած: Ներկայումս 153 ստեղծություն ունեցող այդ «արհեստական» գյուղի բնակիչները կորցնելով ադրուսի վերջին միջոցները, հեռանում են՝ տունն ու 1000 քմ ստեղծած հողամասը վաճառելով 700 դոլարով: Հինգ ընտանիք արդեն հեռացել է, մյուսները հեռանալու միջոցներ են փնտրում, որովհետեւ նրանց միակ բարդությունը ոռոգման ջուրը չէ, որի մասին այդքան երկար խոսեցինք: Դա միայն իրենց ադրուսի ապահովման միջոցն է, բայց գյուղը նաեւ խմելու ջուր չունի, որի «ոդիսականը» նույնքան տարիք ունի, որքան ոռոգման ջրինը: Իմ այցելության օրը մեծ ու փոքրով շրջապատել էին գյուղամիջի «Հեղնար աղբյուրը», ընդամենը մի քանի օր է, որ Նոր Ամանորը խմելու ջուր էր ունեցել: Գյուղացիները միմյանց հերթ չալով պատմում էին գյուղի յուրահատուկ ամառվա տարի, իրենց պապական արտերի ու տարիներով ջուր չտեսած գյուղի հոգսերի մասին: Ջմռանը ձյունն է փրկում, գարնանն ու աշնանը ուրախանում են հորդառատ անձրեւների համար, իսկ ամռանը... Ցավոք, ամռանը փրկություն չկա: Տարվա տասն ամիսը ի մի բերած իրենց «Հեղնար աղբյուրից» հազիվ թե երկու ամիս ջուր եկած լինի, այնպես որ, ամառվա երեք ամիսների դադարից հետո բնական գուրգուրանքով պետք է նայեին ծորակին՝ բարձրաձայն մենախոսելով՝ տեսնես որքա՞ն ժամանակ կունենան այդ ջուրը: Ամառվա տարին ջրասար մեքենաներով լիտրը 1,5 դրամով ջուր են վաճառել գյուղում, որի մատրությանը դարձյալ չէին վստահում:

Վերջին 1,5 տարում, նրանց ասելով, գլուխ է բարձրացրել դիզենտերիան: Մեկ-մեկ թվարկում էին, թե այսինչի ընտանիքը ինչքան տառապեց, մյուսը կարողացավ ընտանիքը հասցնել հարեւան Թալիշ գյուղի հիվանդանոց ու փրկել, իսկ ընդհանրապես «բուժումն» իրականացնում են տնային պայմաններում՝ հեքիմությամբ: Այդ իսկ պատճառով հիվանդների ընդհանուր թիվը ճշտելը շատ դժվար էր՝ հիվանդանոցում չեն հաշվառվել, սակայն չէին թաքցնում, որ հենց այդ պահին մեկի երեխան, մյուսն ինքը այդ վիճակում են: Բժշկից չէ, որ խուսափում են: Գյուղի բուժկետն անգամ առաջին օգնություն ցուցաբերելու հնարավորություն չունի, իսկ Թալիշի կամ Աշտարակի հիվանդանոց հասնելու համար դրամ է պետք: Պետական ավտոբուսը մինչեւ 300 դրամ է գանձում Աշտարակ հասնելու համար:

Սա թերեւս չարյաց փոքրագույնն է՝ չորությունից գյուղ ներխուժած օձ ու կարիճի համեմատությամբ: Նախորդ տարում օձ ու կարիճի խայթոցի 10 դեպք են ունեցել՝ այդ թվում նաեւ մահացության: Այս տարի արդեն չորս դեպք եղել, որից մեկը մահացել էր կարիճի խայթոցից: «Կարիճն արդեն անկողիններիս մեջ է մտնում», հավաստում էր կանանցից մեկը, որի մասին ասացին՝ հազիվ են կարողացել փրկել կարիճի խայթոցից: Միշտ չէ, որ առաջին օգնությունը ժամանակին է տրվում, մեքենա չկա հիվանդանոց հասցնելու համար:

Ինչպես բոլոր գյուղական վայրերում (նույնիսկ մայրաքաղաքում այդ երեւույթը կա) մարդիկ ընտանիքը սնելու լավագույն տարբերակը կաթնատու կենդանիներ, հատկապես կով ձեռք բերելը համարեցին, Նոր Ամանորում էլ, բնականաբար, չորացած տնամերձները փոխարինել են անասնապահությամբ կամ էլ հավելյալ եկամտի աղբյուր են դիտել: Սակայն ջուր չլինելու եւ չորության պատճառով գյուղում համատարած մորթ է սկսվել կամ էլ սատկել են հիմնականում ճահճի աղտոտ ջրից ստացած հիվանդություններից: Ադրուսի վերջին միջոցը կորցնելուց հետո նորամանորցիներից ոմանք վարձու աշխատանքի են անցել հարեւան գյուղի եզդիների մոտ: Ձայրույթը չկարողանալով զսպել նախահարձակ են լինում «մի փոր հացի համար» ու դարձյալ վերհիշելով իրենց կորցրած երբեմնի բարեկեցությունը՝ աննեղելի են համարում այդ ասիճանի նվաստացումը:

Հանդիպածս նորամանորցիներն ադֆաիկ հագուկապ ունեին եւ ցավալիորեն, քաղաքաբնակի նման հույսերը կապել էին այդպես էլ գյուղ չհասնող «Փարոսի» օգնության հետ: Բայցեւայնպես, փորձեցի ճշտել՝ շերտավորում կա՞ գյուղում: Պարզվեց, որ ամեն բնակավայր շերտավորման իր չափանիշներն ունի: Նոր Ամանորում եթե մեկ-երկու կով ունես, կոմբայն կամ բեռնատար մեքենա, որով սեզոնային աշխատանքի ժամանակ կարող ես դրամ վաստակել՝ ունեւոր ես: Եթե անգամ մի պարկ ադյուր ունես՝ ամիսներով հացի երես չտեսածների կողքը դարձյալ ունեւոր ես: Գյուղացիներից մեկն իրենց կեցության մասին այսպես արտահայտվեց՝ «Ուրիշ տեղերում դրամ ու ոսկի են տներից գողանում, Նոր Ամանորում՝ ջուր են գողանում»:

Թե ինչպես է հարցի լուծումը պատկերացնում գյուղապետը, պատասխանեց. «Մեր տարածքը հիմնականում ոռոգվում է Ադարանի ջրամբարից ու Սեւանից: Տնտեսությունը Արզնի-Շամիրամ ջրասարի վերջնամասում է գտնվում, որից օգտվում են հինգ գյուղ: Եվ, որովհետեւ այսօր հսկողություն չի սահմանվում, որպեսզի ջուրը բաշխելիս խախտում չլինի 103 կմ-ի վրա եւ խախտման հետեւանքով 100 լ ջուր է պակասում, նշանակում է վերջնամասից է պակասում: Բացի այդ, 8-9 տարվա ընթացքում ջրասարները չեն վերանորոգվել, ուստի ջուրը տեղ է հասնում 70 տոկոս կորստով: Մարզպետարանի եւ ջրտնտեսի հետ աշխատում ենք ջրասարների վերանորոգման ծրագիր իրականացնել, եւ մինչեւ 98 թ.-ի վերջը ջրասարը կշահագործվի, եւ եթե Սեւանը մեզ ջուր տա՝ հարցը կարող է լուծվել: Հարցը բարձր մակարդակով պետք է լուծվի, որ չի արվում»:

Իսկ եթե ջրասարը չվերանորոգվի ու Սեւանն էլ ջուր չտա, ու բարձր մակարդակներում էլ Նոր Ամանորը շարունակի «արհեստական» մնա՞լ...

ԱՐԱՅԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԿԱՆԱՅՔ

## Դա մեր «վաղն» է, իսկ այսօր...

*Առաջնահերթ ուշադրություն, վերջնահերթ՝ գնահատում*

***Վերջին տարիներին հայ կնոջը բաժին հասած կյանքի դժվարություններին «Ազգը» անդրադարձել է թե սեփական թղթակցություններով, թե ընթերցողների արձագանքներով: Մշտական տեղ է հատկացվել նաեւ հայ կնոջ իրավիճակի վերաբերյալ կանանց կազմակերպությունների գնահատականներին, որոնք հաճախակի են հակադրվում ՄԱԿ-ի բնորոշումներին եւ նույնքան բավարարված չեն դրանցից, որքան այս նյութի հեղինակը: Մեր բոլորիս մտահոգությունը մեկն է՝ հնարավորին չափ նոպաստել կանանց ուսերին ընկած բեռի թեթեւացմանը, որն առայժմ չի հաջողվում առաջին հերթին սոցիալական քաղաքականություն չունենալու պատճառով: Ուստի ավելորդ չենք համարում մեկ անգամ էլ անդրադառնալ նշված հարցին, մանավանդ որ հեղինակը սոցիալական ծառայության աշխատող լինելով կնոջ շարունակական բվաառ վիճակի անմիջական ականատեսն է:***

ՄԱԿ-ի կողմից հայ կնոջ վիճակի «բավարար» գնահատումը ինձ բերեց այն եզրակացության, որ «կնոջ վիճակը» որպես սոցիալ-հոգեբանական եւ «վիճակի գնահատումը» որպես բարոյագիտական կատեգորիաներ, բացահայտման եւ գիտական ծեւակերպման խիստ կարիք ունեն միջազգային մասշտաբով:

Բայց միաժամանակ դա անհավատալի է, եւ այդ է պատճառը, որ անմիջապես մի երկրորդ միտք փայլատակեց, այն է՝ այս ադրոբացիան (պատշոնական հավանությունը) ավտորիտար է, հիմնված ոչ թե իրական փաստերի, այլ ինչ-որ անհերեւույթ իշխանությանը անառարկելիորեն ենթարկվելու փաստի վրա:

Իսկապես, ինչի՞ց ելնելով է տրվել հայ կնոջ վիճակի այդ գնահատականը: Չէ՞ որ կնոջ առաջնային դերը բնության մեջ պարզապես ահսիոն է՝ նրա վրա են դրված երեխաներ ծնելու, նրանց գոյությունն ապահովելու եւ հետո դաստիարակելու խնդիրները: Հայ կնոջ երկրորդ հիմնական դերը՝ ամուսնու (զուգընկերոջ) կյանքի արժանի ընկեր լինելն է: Իսկ այսօր, երբ «ժամանակը դարձել է ժայթիլ իր բալդիզը» եւ հայ ժողովուրդը հայտնվել է պատմության կտրուկ պտույտներում, հայ կինն ուժերի գերլարմամբ դիմակայում է ժամանակի եւ բնության արհավիրքներին:

Այսօր շատ հայ ընտանիքներում երեխաները սոված են ննում, իսկ գործազուրկ ամուսինները ննած են ծեւանում... սոցիալ-հոգեբանական վիճակից բխող ստրեսի պատճառով ցամաքում է ծննդկանի կաթը, նորածինը ծնված օրվանից բախվում է մռայլ իրականությանը (նրան ինչ, թե ուկայում մոր կաթին փոխարինող սնունդ է վաճառվում, երբ ծնողները գործազուրկ են)... սեռտեմբերի մոտենալը շատ մայրեր ահով են զգում..., ինչ՞ա՞ն ինչ՞ա՞ն ծնողներ են խղճի խայթ զգում, երբ իրենց խելացի ու բանիմաց երեխաների երազանքները, բարձրագույն ուսումը ծնողների անվճարունակության պատճառով չեն իրականանում, մայրերի մեծամասնությունն այսօր հիվանդ երեխային անհրաժեշտ բժշկական օգնությամբ անգամ չի կարող ապահովել, էլ ուր մնաց իրենց առողջությանը կարողանան հետեւել...

Թվելու շատ բան կա, բայց այսքանը լիովին բավարար հիմք է այսօրվա հայ կնոջ վիճակի անբավարարության մեջ համոզվելու համար: Թվել չեմ ուզում, որպեսզի նկարագրությունը հաճույք չպատճառի այն անհերեւույթ իշխանությանը, որի մասին նշեցի վերեւում: Չեմ ուզում քվել, որ ցավ չպատճառեմ բարի մարդկանց: Որպես սոց. ծառայության տեսուչ, հարկ եմ համարում շեշտել, որ հայ կնոջ վիճակը առաջնահերթ ուշադրություն է պահանջում, բայց նրա գնահատումը ճիշտ կլինի միայն ընտանիքի որպես այսօրվա եւ վաղվա հասարակության անկյունաքարի, բոլոր պրոբլեմների ուսումնասիրության ու ճիշտ հասկացման դեպքում: Մի խոսքով՝ առաջնահերթ ուշադրություն, վերջնահերթ գնահատում:

Այսօրվա դրությամբ «բավարար» եւ նույնիսկ էլ ավելի բարձր եմ գնահատում հայ կնոջ հասարակական-քաղաքական գործունեությունը, բայց նրա վիճակի «բավարար» գնահատական ընդունելը համարում եմ ինքնաժխտում:

Հուսով եմ, որ Արիադնայի թելը մեզ էլ կառաջնորդի դեպի ելք եւ կգա ժամանակը, երբ ինքներս հայ կնոջ վիճակի գնահատականը կվերանայենք: Բայց դա վաղը... Իսկ այսօր...

ՇՈՒՇԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ

## Ուղղենք, որ էլ չսխալվենք

- «Ազգ», 07.08.97. «Հակասեմական լոզունգ»: Սխալը բխում է ռուսերենից մեքենայաբար պատճենելուց: Հայերեն ձեւն է «հակասեմական»: Ի դեպ, «սեմական» բառը, որը ծագում է Նոյի որդի Սեմի անունից, նշանակում է «ժողովուրդների մի խումբ» («սեմական ժողովուրդներ»), «լեզվական մի խումբ» («սեմական լեզուներ»): Իսկ օտար «լոզունգ»-ի փոխարեն հայերենում վաղուց գործածվում է «կարգախոս» բառը:

- «Ազգ», 15.08.97. «... Ռուսաստանի եւ Հայաստանի նախագահների Մոսկվայում կայանալիք հանդիպման ժամանակ կկնքվի...»: Մոսկվան չի պատկանում ոչ Հայաստանի, ոչ էլ անգամ Ռուսաստանի նախագահին: Պետք է լիներ «... նախագահների (բութ նշանով) Մոսկվայում կայանալիք»: Բացի այդ, սովորաբար աշխարհն ընկալվում է սեփական երկրի տեսանկյունից՝ հայաստանցին պիտի ասի «Հայաստանի եւ Ռուսաստանի», իսկ ռուսաստանցին «Ռուսաստանի եւ Հայաստանի»:*

- Նույն տեղում. «... Մոսկվա կմեկնի ՀՀ նախագահի այցը նախապատրաստող աշխատանքային խումբը, որտեղ վերջնական տեսքի կբերվի ստորագրվելիք փաստաթղթերի փաթեթը»: Քանի որ «որտեղ»-ը կապված է «Մոսկվա» բառի հետ, ուստի նախընտրելի շարադասությունն է «...ՀՀ նախագահի այցը նախապատրաստող խումբը կմեկնի Մոսկվա, որտեղ...»:

- Նույն տեղում. «ՀՀ նախագահը կմասնակցի հայ-ռուսական բարեկամությունը խորհրդանշող հուշարձանի բացման արարողությանը, որի հեղինակն է հայտնի քանդակագործ Ֆրիդ Սողոյանը»: Սողոյանը ոչ թե արարողության, այլ հուշարձանի հեղինակն է: Ուստի ճիշտ կլիներ «ՀՀ նախագահը կմասնակցի հայ-ռուսական բարեկամությունը խորհրդանշող հուշարձանի (հեղինակ հայտնի քանդակագործ Ֆրիդ Սողոյան) բացման հանդիսավոր արարողությանը»:

ԼԵՎԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

** Ինչպես ասում են լեզվի պետական տեսչության այս «դիտողությունը» ճաշակի հարց է: Այստեղ կանոնակարգումը մերժելի է: Խմբ.*

ԱԶԳ

# Միջազգային

ԿՐԱՍՆՈՅԱՐ

## Եվ նորից թուրք մեսխեթցիները

Վերջերս Կրասնոդարի երկրամասում կրկին սրվել են ազգամիջյան հարաբերությունները եւ նորից թուրք մեսխեթցիների պատճառով: Իրախանությունները կանգնել են մի շարք հիմնախնդիրների առաջ եւ ըստ ամենայնի փորձում են կանխել հնարավոր ընդհարումներն ու դեպքերի արյունոտ զարգացումը: Տեղի են ունենում բուռն քննարկումներ, որոնց մասնակցում են տարբեր մակարդակի իրախանությունների (հաղթային, շրջանային, երկրամասային), իրավապահ մարմինների, հասարակական կազմակերպությունների եւ նույնիսկ այն հանրակրթական դպրոցների ներկայացուցիչները, որտեղ սովորում են թուրքերի երեխաները: Շրջանային իրախանություններն առաջարկում են վտարել թուրքերին, իսկ երկրամասային իրախանությունները փորձում են խուսափել այդ ծայրահեղ միջոցից եւ ինչ-որ ձեւով հարթել հակամարտությունը:

Կրասնոդարի հայ համայնքի «Երկրամաս» ռուսատառ թերթը տպագրել է երկրամասի վարչակազմի սեպտեմբերի 17-ի հայտարարությունը, որտեղ ահա թե ինչպես են ներկայացվում իրադրության սրման պատճառահետեւանքային կապերը: «Հակամարտության հիմքում, ասվում է հայտարարության մեջ, ընկած են թուրք մեսխեթցիների քրեական բնույթի դրսեւորումները եւ տեղական կազմակերպությունների խիստ հակազդեցությունը դրանց»: Թերթը փոքր-ինչ մանրամասնում է այդ «դրսեւորումները»: Պարզվում է, որ թուրքերը հեղինակել են մի շարք ծանր հանցագործություններ, որոնց թվում է դասական թուրքական «դրսեւորումը»՝ 5-ամյա տղեկի լլկումը:

Ինչպես հայտնի է, թուրք մեսխեթցիները Կրասնոդարի երկրամասում հայտնվել են 80-ական թթ. վերջերին Ուզբեկստանի արյունոտ դեպքերից հետո, որտեղ ուզբեկները թուրքերի գլուխների վրա ցուցադրել են գանգամաշկ հերթելու իրենց վարպետությունը: Իսկ Ուզբեկստանում նրանք հայտնվել են Վրաստանից վտարվելուց հետո: Ընդ որում, Կրասնոդարում նրանց հայտնվելը համաձայնեցված չէր երկրամասի իրախանությունների հետ եւ հակասում էր թուրքերին Ռուսաստանի կենտրոնական մարզերում տեղավորելու խորհրդային կառավարության որոշմանը: Ավելին ԽՍՀՄ, իսկ այնուհետեւ Ռուսաստանի Դաշնության կառավարությունները պարբերաբար հավաստիացնում էին, որ թուրքերը շուտով կտեղափոխվեն իրենց «պատմական» հայրենիքը:

Բայց միեւնույն է, հիմնախնդիրը վաղ թե ուշ պիտի լուծվի հասնդված են իրախանությունները: Այլ հարց է, որ նրանք միայնակ չեն կարող դա անել: Ահա թե ինչու հարցն ամենայն սրությամբ դրվել է երկրի ղեկավարության առջեւ: Երկրամասի վարչակազմը նամակ է հղել նաեւ ՄԱԿ-ի փախստականների կոմիտեին, խնդրելով միջազգային մակարդակով լուծել թուրք մեսխեթցիների խնդիրը: Իսկ մինչ այդ վարչակազմը դիմում է թուրքերին տեղացիների սովորույթները հարգելու եւ կարգուկանոնը չխախտելու կոչով: Դիմում է նաեւ կազակներին, նույնպես անելով ձեռնպահ մնալ ծայրահեղ միջոցներից եւ հավաստիացնելով, որ ցանկացած ազգության տեր հանցագործ Կրասնոդարում կկրի ամենախիստ, բայց օրինական պատիժ:

Ինչ վերաբերում է կազակներին, ապա տեղին է հիշեցնել ս. թ. մարտի «Երկրամաս» թերթի մեկ այլ հաղորդագրություն, ըստ որի Կրասնոդարի երկրամասի Օրենսդիր ժողովի տեղական ինքնակառավարման եւ կազակների հարցերով կոմիտեն խորհրդարանական քննարկումներ է կազմակերպել տեղական ինքնապաշտպանության ջոկատները վերացնող օրինագծի մասին: Կազակ պատգամավորները քննարկումների ժամանակ փորձել են համոզել այդ օրենքի շտապ ընդունման անհրաժեշտությունը: Ընդ որում կոմիտեի նախագահ, Համակուբանյան կազակական զորքերի ատամանի տեղակալ Յուրի Անտոնովը ներկայացրել է իր ձեռքի տակ եղած այն փաստաթղթերը, ըստ որոնց Հյուսիսային Կովկասը փորձում են անջատել Ռուսաստանից, ինչում շահագրգռված են Վրաստանը, Թուրքիան եւ Ադրբեջանը, եւ ինչը կատարվում է ՆԱՏՕ-ի հովանու ներքո:

ԳԵՂԱՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
«Նոյյան տապան»

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

## Երիտասարդ կանայք հրավիրվում են որպես դայակներ

30 ՍԵՊՏԵՄԲԵՐ, VOA, BBC. ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը որոշում ընդունեց երկարաձգել այն ծրագրի գործողությունը, որի համաձայն մինչեւ 1 մլն անլեգալ ներգաղթյալներ կարող են մնալ Միացյալ Նահանգներում, մինչեւ որ ինվեն նրանց դիմումները՝ ԱՄՆ-ում մշտական բնակություն հաստատելու մասին: Ներկայացուցիչների պալատը կողմ քվեարկեց նաեւ մշտական կարգավիճակ ստանալու այն ծրագրի օգտին, որը երիտասարդ օտարերկրուհիներին թույլ է տալիս աշխատել ամերիկյան ընտանիքների մոտ որպես դայակներ, դաստիարակներ եւ օգնականներ տնտեսության մեջ: Օրինագիծն ավելի վաղ հավանության էր արժանացել Սենատի եւ այժմ պետք է ստորագրվի ԱՄՆ-ի նախագահի կողմից: Այդ ծրագրի շրջանակներում ամեն տարի գլխավորապես եվրոպական երկրներից ԱՄՆ է գալիս շուրջ 13 հազար երիտասարդ կին: Այդ ծրագիրն ավելի վաղ վերանայվում էր յուրաքանչյուր 2 տարին մեկ: Կանայք աշխատանքի համար ստանում են շաբաթական 115 դոլար, ինչպես նաեւ անվճար բնակատեղ եւ սնունդ:

ՖՐԱՆՍԻԱ

## «Յումանիտե» թերթի գոյատեւումը հարցականի տակ է

Ֆրանսիացի կոմունիստների օրաթերթ «Յումանիտեն» կորցնում է ընթերցողներին եւ մտահոգում կոմկուսի ղեկավարությանը: ՖԿԿ գլխավոր քարտուղար Ռոբեր Յուն բնավ չի սիրում այդ թերթը: Առավոտյան իր աշխատասենյակում կուսակցության օրաթերթը կարդալիս նա հաճախ է դժգոհում. հոդվածները ծանծաղ են, վատ են գրված, հաճախ շրջանցում են քաղաքական հարցերի էությունը: Կոմկուսի ղեկավարներից մեկն ասում է, որ մարդիկ այդ թերթը ընթերցում են պարտադրանքով եւ ոչ թե հաճույքի համար:

Կոմունիստական վարչամեքենայի բոլոր օղակներում զգացվող այդ դժգոհությունն այսօր սպառնում է Փարիզի մերձակա Սեն Դընի քաղաքում հրատարակվող օրաթերթի հետագա գոյատեւմանը: Եթե 1980-ական թթ. ամեն առավոտ շուրջ 100 հազար մարդ «Յումանիտե» էր գնում, ապա 1995 թ. թերթի օրական վաճառքը կազմեց հազիվ 61,6 հազար օրինակ: Սամուելի տարածման գործակալության տվյալների համաձայն, անկումը շարունակվել է նաեւ 1996 թ., երբ հաստավաճառի օրինակների թիվը իջել է 58,2 հազարի: Կրճատվել է նաեւ «Յումանիտե դիմանշ» շաբաթաթերթի տպաքանակը: Ինչպես տեղեկացնում է «Էքսպրես» հանդեսը, 1996 թվականը կոմունիստական օրաթերթի հրատարակիչներն ավարտել են 3,7 միլիոն ֆրանկ ֆինանսական պակասորդով:

Ընթացիկ տարին եւս բարենվաստանք չի տալիս: Թերթի տնօրեն Պիեռ Զարկան նշում է, որ անկումը շարունակվում է: Իսկ գլխավոր խմբագիր Կլոդ Կաբանեսն ավելացնում է, որ իրենք «անելանելի» վիճակում են: «Յումանիտե դիմանշ» գլխավոր խմբագիր Մարտին Բյուլարի կարծիքով, կոմկուսի գլխավոր քարտուղարը ընթրոնում է, որ այսպես շարունակել չի կարելի, բայց կուսակցական ղեկավարները հագիվ թե ընդունեն իրավիճակից բխող որոշումներ:



Բանն այն է, որ կոմունիստական մամուլի թվաքանակի պատճառները հայտնի են ամենքին: Դրանք հանգում են թերթի խմբագրությունների հետ կուսակցական անառողջ հարաբերություններին: Օրինակ, «Յումանիտեի» խմբագրատուն մտնելու համար մամուլի աշխատողի քարտը պարտադիր չէ, մինչդեռ կուսակցական տոմսն անհրաժեշտ է: Թերթի գրերից մեկի պատասխանատու եւ արհմիութենական գործիչ Ժակ Թեսիեն խոստովանում է, որ «Յումանիտեի» 59 լրագրողներից միայն 3-ն են լրագրության դպրոց անցել: Կոմունիստական օրաթերթի լրագրողները մեծ մասամբ կոմկուսի ազատված աշխատողներ են, որոնք խմբագրությունում հայտնվել են քաղաքական հանգամանքների բերումով կամ կուսակցության գաղափարախոսական զարգացումների հետեւանքով:

Այդօրինակ «հավաքագրումը», բացի մամուլի որակին հասցրած վնասից, խիստ սահմանափակում է լրագրողների անկախությունը: Իրենց քաղաքական հայացքների գերին դարձած այդ լրագրողները չեն կարողանում տալ իրադարձությունների սեփական մեկնաբանությունը: Մարտին Բյուլարը գտնում է, որ հարկավոր է երկրի կոմկուսի հետ ստորագրել խմբագրական խարտիա, որը մասնագիտական ազատ գործունեության հնարավորություն կտար լրագրողներին: Կլոդ Կաբանեսն ավելացնում է, որ պետք է վերջ դնել «Յումանիտեում» աշխատելու համար կոմկուսի տոմս ունենալու անհրաժեշտությանը: Բացի դրանից, լրագրողներին հարկավոր է վճարել բնականոն եւ ոչ թե ինչպես հիմա կուսակցության ազատված աշխատողների ցուցակներով:

Այս բարեփոխումների իրագործումը բարդանում է քաղաքական եւ ֆինանսական դժվարությունների պատճառով: Բայց իրագործման դեպքում անգամ դրանք չէին կարողանա վերաշխուժացնել կոմունիստական մամուլը: Քանզի կոմունիզմի հնաբույր գաղափարներով սնված ընթերցողները եւս խիստ պահպանողական են: Այսպես, կոմունիստական թերթում երիտասարդության համաշխարհային օրերի, Հռոմի պապի Ֆրանսիա կատարած այցի, իշխանուհի Դիանայի մահվան լուսաբանումները ընթերցողները համարեցին «բուրժուական մամուլի» մեկնաբանություններից ոչ այնքան տարբեր: «Յումանիտե» թերթի պատասխանատուներից մեկը խոստանում է, որ խմբագրությունը դժգոհ ընթերցողներից ստացել է բազմաթիվ նամակներ, որոնց հեղինակները ցանկություն են հայտնել, որ պատը պախարակվեր, իսկ Դիանայի մահն առհասարակ լռության մատնվեր:

Նման պայմաններում «Յումանիտեի» ուղին դառնում է նեղ ու քարքարոտ, իսկ գոյատեւման ընդհատման հեռանկարը հույժ իրական:

Պ. Բ.

ՀԱՄԱՌՈՏ

## Գերմանիան աջակցում է Թուրքիային՝ ակնկալելով բարեփոխումներ

ԲՈՆՆ, 01 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Սեպտեմբերի 30-ին Գերմանիայի ղեկավարները երկրում այցելությամբ գտնվող Թուրքիայի վարչապետ Մեսութ Յըլմազին հայտնել են, թե Գերմանիան կաջակցի Թուրքիային Եվրամիությանն անդամակցելու, սակայն նախ եւ առաջ ակնկալում է, որ Անկարան առաջընթաց կատարի իր ներքին եւ արտաքին քաղաքականությունում: Յըլմազի եւ կանցլեր Քոլի հանդիպումից հետո հայտնել է Քոլի խոսնակ Պետեր Հաուսմանը:

## «Բրիթիշ փեթրոլիում»-ը հաստատվում է Ռուսաստանում՝ ներդնելով 150 մլն դոլար

Բրիտանական «Բրիթիշ փեթրոլիում» նավթային ընկերության եվրոպական տուկայի տնօրեն Պիտեր Փեթհաուզը հայտնել է, որ ընկերությունը որոշել է մինչեւ 2000 թ. 60 նավթային կայաններ կառուցել Մոսկվայում եւ նրա արվարձաններում: Փեթհաուզը սեպտեմբերի 29-ին Մոսկվա է ժամանել՝ մասնակցելու երկրորդ կայանի բացմանը: Նա ասել է, որ ընկերությունը 150 մլն դոլար կներդնի այդ ծրագրերում:

## Օտարերկրյա ներդրումների ծավալով Լեհաստանն աչքի է ընկնում

Լեհաստանի օտարերկրյա ներդրումների գրասենյակը հայտնել է, թե անցյալ տարվա ընթացքում Արեւելյան եւ Կենտրոնական Եվրոպայում ամենախոշոր ներդրումները եղել են Լեհաստանում 5,6 մլրդ դոլար: 1990 թվականից Լեհաստանում ներդրումների ընդհանուր գումարը հասել է 16,2 մլրդ դոլարի: Նույն ժամանակաշրջանում Հունգարիայում կատարվել է շուրջ 2 մլրդ դոլարի, Ռուսաստանում՝ 1,9 մլրդ դոլարի, իսկ Չեխիայում՝ 1,3 մլրդ դոլարի ներդրում: «ԵՐԵՎԱՆ»

## Մազարի Շարիֆի համար կատաղի մարտերը շարունակվում են

ԱԲՈՒ ԴԱԲԻ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ. Շդադարող կատաղի մարտերի ընթացքում Աֆղանստանի հյուսիսում գտնվող Մազարի Շարիֆ քաղաքի՝ հակաթալիբյան կոալիցիայի գլխավոր հենակետային հանգրվանի պատշգամբներին հաջողվել է «Թալիբան» շարժման հարձակվող ջոկատներին երեք կիլոմետր ետ շպրտել ռազմաճակատի արեւելյան հատվածում: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման համաձայն, արեւմտյան տեղամասում մարտերի սաստկությունը նվազել է, քանի որ հակառակորդների բոլոր ջանքերը կենտրոնացված են քաղաքից դեպի արեւելք, որտեղ գտնվում է Մազարի Շարիֆի օդանավակայանը: Քաբուլում «Թալիբան» շարժման ներկայացուցիչը Մազարի Շարիֆի պատշգամբներին առաջարկել է ադամովել անվտանգ ելքը քաղաքից, եթե նրանք դադարեցնեն դիմադրությունը: Սակայն թալիբների հակառակորդները չեն ցանկացել օգտվել այդ առաջարկությունից: Մազարի Շարիֆի շրջանում թալիբների եռանդուն գործողությունները բացատրվում են այն հանգամանքով, որ նրանց հաջողվել է իրենց կողմը գրավել փուշտունների մի քանի տեղացի դաշտային հրամանատարների:

## Իսրայելցիներն ազատ են արձակել «Համաս» հոգեւոր առաջնորդին

ԹԵԼ ԱՎԻՎ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ. Իսրայելցիները «առողջական վիճակի պատճառով» բանտից ազատել են «Համաս» շարժման հոգեւոր առաջնորդ շեյխ Ահմեդ Յասինին եւ նրան արտաքսել Հորդանան: Ինչպես հաղորդել է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, անդամալույծ եւ կույր իսլամական հոգեւորականը, որը կալանքի մեջ էր գտնվում ինը տարի, ազատ է արձակվել Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի հանձնարարությամբ: Վերջինս այդ կերպ է պատասխանել Հորդանանի Հուսեյն թագավորի կոչին, որը հայտարարել էր, թե նման քայլը կարող է օգնել հաշտության գործընթացի առաջընթացին:

ԱԶԳ

# Մշակույթ

# Ճանապարհորդություն դեպի ջազային հասարակություն

*Կոմպոզիտոր, դաշնակահար, վոկալիստ Վահագն Հայրապետյանը ծնվել է 1968 թ. Երեւանում. երաժիշտների ընտանիքում (Կարապետ Հայրապետյանի որդին է): Ապշեցուցիչ երաժշտական ընդունակությունները ի հայտ են եկել դեռեւս երկու տարեկանում (հորինել է առաջին երգը): Երեք տարեկանից հետեւությամբ վերարտադրում էր երաժշտական բարդ ստեղծագործությունները. ձայնով նմանակում երաժշտական գործիքներ. չորս տարեկանում դաշնամուր էր նվագում: Յոթ տարեկանում մանկական օպերա է հորինում: Միշտ մասնակցել է զանազան համերգների, հեռուստահաղորդումների, մրցույթների (Արամ Խաչատրյանի անվան ամենամյա մրցույթների մասնակից ու մրցանակակիր է): Վահագն հրաշամանուկի մասին հաղորդումներ են պատրաստել Տալլինի, Վիլնյուսի, Մոսկվայի, Լեհաստանի հեռուստատեսությունները:*

*Սովորել է Չայկովսկու անվան դպրոցի դաշնամուրի բաժնում (Էդվարդ Բաղդասարյանի դասարան), այնուհետեւ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժնում (Արմեն Սմբատյանի դասարան): 1983-87 թթ. մասնակցել է Տալլինի ամենամյա ջազի փառատոներին, Թբիլիսիի (1984 թ.) փառատոնին, համամիութենական «Իմպրովիզացիա 89» մրցույթի գլխավոր մրցանակակիր է, որը նրան հնարավորություն տվեց մասնակցելու Կրակովի «JAZZ JAMBORI-89» փառատոնին (Կրակովի ջազ փառատոնին նա մասնակցել է դեռեւս ինը տարեկանում ազատ իմպրովիզացիաներով հանդես գալով լեհ հայտնի սաքսոֆոնահար Մոնյակի հետ): Համերգներով ելույթ է ունեցել ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Բելգիայում, Հալեպում, Դամասկոսում, Մոսկվայում, Լենինգրադում:*

Վահագն Հայրապետյանը կոնսերվատորիայի հետ

ռակներից մեկն է, մյուսը կոչվում է «Ճանապարհորդություն Նոր Օռլեան» եւ շուտով կթողարկվի: Դա Վահագն Հայրապետյանի, Ջոնի Վիդակովիչի (հարվածային գործիքներ), Էդուարդի (կոնտրաբաս) կատարմամբ ներկայացնում է Վ. Հայրապետյանի, ինչպես նաեւ հանրաճանաչ կոմպոզիտորների ջազային 10 ստեղծագործությունները: Իսկ այս տարի ձայնագրված երկու սկավառակներում Վ. Հայրապետյանի ստեղծագործություններն են:

Երիտասարդ երաժշտի այս հաջողությունները տաղանդի եւ տքնաջան աշխատանքի արդյունք են: Նրա կատարողական բարձր տեխնիկան, վիրտուոզությունը, արտահայտիչ երգեցողությունը, իմպրովիզացիաների մեղեդայնությունն, ինչպես միշտ, հիացրել են: Երեւանյան շնորհանդեսին նա կատարեց իր եւ այլ հեղինակների գործերը Նիկոդայոս Վարդանյանի (կոնտրաբաս), Ալեքսանդր Աղամյանի (հարվածային գործիքներ), Տիգրան Փեշտիմալջյանի (վիբրոֆոն) նվագակցությամբ: Այս խառնակ անսամբլային փոխադրած զգացողությամբ հրաշալի էր մեկնաբանում ջազային երգը): Նոր Օռլեանը ջազային երաժշտության խոշոր կենտրոն է, որի երկու էլիտար ակումբներում՝ Սնագ Հարբեբում եւ Ջոու Քեյսում Վահագնը ելույթներ է ունեցել ջազ երաժշտության աստղերի հետ (առաջինում բազմիցս համերգներ է տվել Քլարենս Ջոնսոն 3-րդի հետ):

Այս տարի մեր հայրենակիցը մասնակցել է Նոր Օռլեանի ջազային փառատոնին, որին մասնակցում էին նաեւ Սանտանան, Ջեյմս Բրաունը, Էրիկ Հենկոկը եւ ուրիշներ: Նրանցից շատերը, մասնավորապես Հենրի Բուլերը, մասնակցել են Լոյոլլա երաժշտական համալսարանում Love for sale-ի շնորհանդեսին: Այնուհետեւ Վահագնը բասկիթառահար Մարվին Վիլյամսի խմբով մասնակցել է Ֆլորիդայի ջազ փառատոնին:

Վ. Հայրապետյանի հաջողությունը այնքան մեծ էր, որ նա հրավիրվել է մասնակցելու հաջորդ տարվա Նոր Օռլեանի փառատոնին: Ամերիկյան լավագույն հեռուստակայանները բազմիցս են անդրադարձել «հայ ֆենոմենի» արվեստին: Ի դեպ, Վահագնը հրավիրված է եվրոպական երգագայության, մասնավորապես Տալլինի, Վիլնյուսի, Շվեդիայի:

Այն հարցին, թե ինչպիսի՞ վիճակում է ջազային երաժշտությունը Հայաստանում, նա պատասխանեց լավ: «Ջազային երաժշտության ամենակարեւոր նպատակն ունկնդրի առկայությունն է: Հայաստանում այժմ ջազի ունկնդիր կա, հետեւաբար կա նաեւ ջազի ապագա: Իմ ուսուցիչը ջազի լեգենդ Բարրի Հարիսը, որին հանդիպել եմ անցյալ տարի, եւ որին շատ բանով եմ պարտական, ամբողջ կյանքը նվիրաբերել է ուսուցանելուն (եւ պրոֆեսիոնալներին, եւ ոչ պրոֆեսիոնալներին), որի նպատակը ջազային հասարակություն ստեղծելն էր:

Ես երազում եմ Հայաստանում ջազի դպրոց ստեղծել, եթե աջակցություն լիներ, իմ ամերիկացի ընկերներին կհավաքեի Հայաստան համերգների եւ դասավանդման»:

Առայժմ Վահագնը Երեւանում է, եւ ամեն երկուշաբթի, հինգշաբթի եւ կիրակի օրերին ընկերների հետ ելույթ է ունենալու «Պարլավոկ» բար-սրճարանում:

ԱՆԺԵԼԱ ԱՄԻԲԵԿՅԱՆ

# Դարշյալ ցուցահանդես «Թատրոնի» սրահում

Երեքամսյա ընդմիջումից հետո «Թատրոն» բարեգործական հիմնադրամի ցուցասրահը կրկին տրամադրվել է արվեստի ներկայացուցիչներին:

Հիմնադրամի տնօրեն Մակիչ Մարգարյանը զրույցի ժամանակ ասաց.

«Անցած երեք ամիսներին «Թատրոն» հիմնադրամի ցուցասրահը վերանորոգվում էր: Մեր նպատակն է՝ բարենպաստ պայմաններ ստեղծել հայտնի եւ անհայտ արվեստագետների համար՝ ցուցադրելու իրենց ստեղծագործական արարումները: Վերանորոգման աշխատանքներին մեծ նպաստ են բերել Երեւանի մետրոպոլիտենի ծառայության պետ Սամվել Վարդանյանը եւ ներկարար վարպետ Ֆերդինանդ Առաքելյանը: «Թատրոն» հիմնադրամը պիտի ծառայի արվեստին: Մեր առջեւ խնդիր ենք դրել բացահայտել հասարակայնության լայն շրջաններին դեռեւս անհայտ տաղանդներին եւ աջակցել հայտնիներին: Այն տեղը, որ գտնվում է մեր հասատությունը՝ հաղարի թատերական հասվածն է, որը եղել է այդպիսին եւ պիտի մնա այստեղ: Այստեղ հավաքվում են դերասաններ, թատրոնի գործիչներ, նկարիչներ, երաժիշտներ, որոնք ջանում են պահպանել մեր մշակույթի հարուստ ավանդույթները: Ի վերջո, էժանագին շոուները չեն մեր մշակույթի ապագան: Մեր ջանքերը նպատակամղված են արվեստում ազգային դիմագծի պահպանմանը»:

Վերանորոգումից հետո նորաբաց ցուցասրահում բացվեց երկու ստեղծագործողների՝ Ջեյմս Վարդանյանի (փայտի փորագրություն) եւ Կարեն Մարգարյանի (խեցեգործություն) աշխատանքների ցուցահանդեսը:

Ջեյմս Վարդանյանը Կաղանից է: Նրա ստեղծագործություններում գերիշխում է հայկական թեմատիկան: «Կյանք», «Ուժ», «Սափոր», «Հավերժություն», «Վերընծայություն» աշխատանքները պատկերում են մեր ժողովրդի մաքառումներն ու պայքարը, լավ ապագայի ակնկալիքները:

Կարեն Մարգարյանը ծնվել է Գյումրիում: Երեւան է տեղափոխվել 80-ական թվականներին: Նրա խեցեգործական աշխատանքների մեծ մասն արված է Անիի եւ Դվինի թղթումների արդյունքների ազդեցության ներքո: Այդպիսի են աղամանները, սկահակները, կժերը եւ այլն: Վերջին աշխատանքները («Խաչքար», «Մեսրոպ Մաշտոց») նվիրված են Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին:

ՀՐԱՉՅԱ ԱԹԱԲԵԿՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

# Շարակնոցը՝ եվրոպական նոտաներով

Հայաստանում կատարվեց հայ եկեղեցու համար եթե ոչ շրջադարձային, ապա գոնե հրամայական նշանակության իրադարձություն: Հայ հոգեւոր երաժշտության եւ եկեղեցու երգացանկի հիմքը՝ Շարակնոցը, 120 տարի ընդմիջումից հետո վերամշակված եւ ամբողջական գրքով լույս տեսավ (առայժմ միայն Ա հատորը) արդեն եվրոպական նոտաների տեսքով:

Բայց «եղեւ այր մի Ստեփան անունով» ի ցեղեն Ոսոստոմա եւ եղեւ եպիսկոպոս լուսավորյալ Պարգեւ, որ հանձն առավ այս գործի պատվիրատուն լինել: Հայոց արվեստաբերության մեջ գործի հեղինակի եւ պատվիրատուի անունները նշվել են զուգահեռաբար՝ Խորենացի-Սահակ Բագրատունի, եղիշե-Դավիթ Մամիկոնյան... Իսկ որոշ դեպքերում

1875 թ., Գեւորգ IV կաթողիկոսի օրոք, երաժշտագետ Նիկողայոս Թաշճյանը ի մի բերեց հայ շարականները եւ նոտագրեց լիմոնճյան նիշերով: Այն ժամանակվա չափանիշներով սա առաջին գիտական աշխատությունն էր: Լիմոնճյան նիշերը կարեւոր դեր կատարեցին հոգեւոր երաժշտության պահպանման գործում, բայց եվրոպական նոտաների լայն տարածման եւ կիրառության հետեւանքով կորցրեցին իրենց կենսունակությունը եւ հայտնի էին միայն աշխարհիկ ու հոգեւոր երաժշտագետների նեղ շրջանակում: Մեր հոգեւորականներից շատերը չգիտեն օգտվել այդ նիշերից, ինչը առաջացնում է շփոթ, ինքնագործունեություն եւ ի վերջո անգրագիտություն: «Նույն մեղեդին տասը եկեղեցում տասը ձեւով են երգում», ծիծաղելով ասաց Խորեն Պալյանը «հայ հոգեւոր երաժշտության լավագույն գիտակը, հանրագիտարանային մտածողության տեր մարդը, առանց որի այս աշխատանքը հնարավոր չէր լինի իրականացնել»:

Այս ցավալի իրողությունը ոչ ոքի համար գաղտնիք չէր, ինչպես որ 1500 տարի առաջ ոչ ոքի համար գաղտնիք չէր հայ գրերի բացակայության հետեւանքով ստեղծված հոգեւոր խառնը: (Զվարթնոց, Հռիփսիմե) պահպանվել է միայն պատվիրատուի անունը (Ներսես Շինող, Կոմիտաս Ա.):

Նոր Շարակնոցը նախորդի պարզ վերծանումը չէ եվրոպական ձայնանիշերի: Ուսումնասիրվել եւ համեմատվել են Մատենադարանում պահվող տպագիր եւ ձեռագիր բոլոր տարբերակները եւ դրանցից ընտրվել են մեր ժողովրդի ավանդույթներին ամենահարազատ մնացածները: Երկուսուկես տարվա տքնաջան աշխատանքից հետո (այն էլ ամենադժվար տարիներին) վերջապես կանոնակարգվեց, միաբանվեց եւ համաշխարհային հանրությանը մատչելի ձեւով ներկայացվեց հոգեւոր երաժշտության գանձարանը: Շնորհանդեսին ներկա գտնվողների շնորհավորանքներին եւ հիացական խոսքերին փոխարեն աշխատախումբը (Ն հոգի՝ սնվ ոգաստանամ) տվեց արել ենք այն, ինչ պիտի անեինք:

Կանցնեն դարեր, ինչպես Չարենցն է ասում, «կփոխվի տարիքը, կփոխվի մարդը», գիրքը կմնա: Ամեն մարդ օրվա հետ կմեծանա նրա արժեքն ու նշանակությունը, զի Հայաստանը այն ինքնատիպ երկիրն է, որ գարնանը «ձյուն ա անում» ու մի ծաղկով գարուն է գալիս:

Ի. ՍԱՐՈՅԱՆ

# Երեւան. Բացվեց Ռուբեն Չարյանի հուշատախտակը

«Մշակույթի աշխատողներիս համար այսօր հիշարժան օր է, միջոցառման մասնակիցներին դիմելով ասաց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Լեւոն Հախվերդյանը, որովհետեւ բացում են հուշատախտակը այն մարդու, այն մտավորականի, որին պարտական ենք շատերս: Մենք տարիներ շարունակ վայելել ենք նրա ներկայությունը, զգացել ենք նրա հոգատար վերաբերմունքը: Նա եղել է մեր ուսուցիչը եւ իր բարությամբ ու գիտելիքներով ձեւավորել մեզ իբրեւ մարդու ու մտավորականի: Եվ մենք սիրով եկել ենք մասնակցելու նրա հիշատակի ոգեկոչմանը»:

Ելույթ ունեցողները, բանաստեղծուհի Մարո Մարգարյանը, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը, Թատերական գործիչների միության նախագահ Երվանդ Ղազանչյանը, նկարչուհի Արմինե Կալենցը, Երեւանի պարարվեստի ուսումնարանի տնօրեն Թերեզա Գրիգորյանը, արվեստաբան Մանյա Ղազարյանը, ծնունդով շուեցի, Ֆրեզնոյում բնակվող հասարակական գործիչ եւ հրապարակախոս Հովիկ Էթյանը, արձակագիր Անահիտ Սահինյանը եւ թատերագիր Բախշիար Հովակիմյանը Չարյանին բնութագրեցին իբրեւ իմաստուն ու հայրենասեր հայի, բարի ու հոգատար ավագ ընկերոջ, իր գործին նվիրված հարուստ գիտելիքների տեր անվանի մտավորականի, համահայկական բազառիկ երեւույթի: Նշեցին նրա հեղինակած գրականագիտական ու թատերագիտական հիմնարար աշխատությունները ու հուշագրությունները, Արվեստի ինստիտուտը հիմնադրելն ու տասնյակ տարիներ ղեկավարելը: Հստակ շեշտվեց այն փաստը, որ հայ թատրոնը այսօր գոյատեւում է նաեւ շնորհիվ Ռուբեն Չարյանի: Բայրոնի փողոցի բնակիչների անունից շնորհակալական խոսք ասաց ծերունազարդ Դերենիկ Սարոյանը: Իսկ Բաբկեն Ներսիսյանի այրին իր խոսքում հիշեցրեց, որ առաջին հուշատախտակ չի փակցված անվանի դերասանի ապրած տանը:

Հուշատախտակի հեղինակներն են ճարտարապետ Լեւոն Իգիթյանն ու քանդակագործ Վանուշ Սաֆարյանը, որոնց եւ ուղղված էր ելույթ ունեցողների շնորհակալական խոսքն ու հարգանքը:

Ճաշակով ձեւավորված հուշատախտակը մարդկանց միշտ կհիշեցնի ակադեմիկոս, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պետական մրցանակի դափնեկիր, Գերմանական շեֆսիրյան ընկերության անդամ, Հռոմի Տիբերինյան ակադեմիայի թղթակցող ակադեմիկոս, Հայաստանի գրողների միության անդամ, անգուգական գրքերի հեղինակ Ռուբեն Վարոսի Չարյանի (1909-1994) ներկայությունը:

Շնորհակալական խոսքով հանդես եկավ Չարյանի այրին՝ Նելլի Խաչատրյանը, որի դերը անգնահատելի է ամուսնու կյանքի պահպանման եւ աշխատանքային պայմանների ստեղծման գործում:

ՀՐԱՉՅԱ ՀՈՒԼԱՆՅԱՆ

ՇԱԽՄԱՏ

# Արոնյանը առաջ է անցնում

*Առաջնությունների ավարտին երկու տուր է մնացել*

Մեր ընթերցողները գիտեն, որ շախմատի աշխարհի պատանեկան առաջնություններն անցկացվում են «Մոսկվա» կինոթատրոնի ճեմասրահում: Սակայն շախմատասերների համար այստեղ հարմար չէ հետեւել պարտիաների ընթացքին: Նրանք գերադասում են հավաքվել կինոթատրոնի մուտքի մոտ տեղադրված ցուցադրական տախտակների առջեւ, որտեղ կարող են ցավել այս կամ այն շախմատիստի համար, ճնարկել պարտիաների ընթացքը:

Ցուցադրվում են վեց հանդիպումներ, իհարկե մարզական առումով հետաքրքիրները, կարեւորները:

Հինգերորդ տուրում կարեւորներից մեկը, իսկ հավաքված շախմատասերների համար՝ ամենակարեւորը մինչեւ 16 տարեկան պատանիների առաջնության մրցաշարի Լեւոն Արոնյան (Հայաստան)-Լեւենտ Վայդա (Ռումինիա) պարտիան էր: Շատերին էր հետաքրքրում՝ կարո՞ղ է արդյոք վերջին տուրերում վերելքով հանդես եկող մեր շախմատիստը առաջ անցնել մրցակցից, որից մինչեւ այդ ես էր մնում կես միավորով: Լեւոնը հիանալի կատարեց իր խնդիրը: Վստահորեն անցկացնելով հանդիպումը, նա տարավ իր չորրորդ անընդմեջ հաղթանակը եւ այժմ 7,5 միավորով գլխավորում է մրցաշարը:

Վայդան եւ Դմիտրի Բունգմանը (Գերմանիա) ունին 7-ական միավոր: Այս տարիքային խմբում իր մրցաշարային վիճակը լավացրեց մեր հանրապետության ներկայացուցիչ Տիգրան Քոթանջյանը: Երկարատեւ, բարդ պայքարում նա կարողացավ շահել պարտիան ռուսաստանցի Վիտալի Շինկեւիչից եւ այժմ եւս երկու

Լեւոն Արոնյան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ

շախմատիստների հետ միասին 6,5 միավորով բաժանում է 4-6-րդ տեղերը:

Մինչեւ 18 տարեկան պատանիների պայքարում իր գործերը զգալիորեն վատացրեց Կարեն Ասրյանը: Սպիտակ ֆիգուրներով հանդիպելով խորվաթ Հրվոյե Սթեւիչի հետ, լավ խաղի ընթացքում նա որակի առավելություն ստացավ: Սակայն հետագայում անբացատրելի բաներ կատարվեցին այս պարտիայում: Կարենը իրար եսեւից զինվորներ կորցրեց եւ ի վերջո պարտություն կրեց: Ասենք, որ վերջին չորս տուրերում նա ընդամենը 1,5 միավոր է վաստակել (երեք ոչ-ոքի): Այժմ նա 6 միավորով բաժանում է 7-11-րդ տեղերը:

Իսկ առաջատարը ուկրաինացի Ռուսլան Պոնոմարյովն է, որը ձեռք է բերել 7,5 միավոր: Իններորդ տուրում տաղանդավոր շախմատիստը ռուսաստանցի Ալեքսեյ Իլյուշինի դեմ պարզապես հիանալի խաղաց: Ռուսլանը խաղասկզբում ֆիգուրային աշխույժ խաղ ստացավ: Հետագայում տակտիկական գործողությունների դիմեց ու նավակը զոհաբերեց փղի դիմաց: Այս զոհաբերությունը մեծ տպավորություն գործեց նաեւ մասնագետների վրա: Ակտիվ փղերի եւ ավելի զինվորների օգնությամբ նա իր առավելությունը հաղթանակի վերածեց:

Պոնոմարյովից մեկական միավորով են ետ մնում հինգ շախմատիստներ: Նրանց թվում է երեւանցի Արթուր Չիբուխչյանը, որը վերջին տուրում կարեւոր հաղթանակ տարավ Բին Թայ Նգուենի (Վիետնամ) նկատմամբ: Մեր շախմատիստներ Անդրանիկ Մաշիկոզյանն ու Մանվել Ավետիսյանը շահեցին իրենց պարտիաները, իսկ Տիգրան Գասպարյանը պարտություն կրեց:

Կրտսեր տարիքի աղջիկների առաջնությունում մեր վեց շախմատիստներից երեքը աղյուսակը գլխավորող չինուհի Յուանյուան Քյուին անմիջական հետապնդողների խմբում էին: Եվ երեքն էլ՝ Լիլիթ Մկրտչյանը, Նելլի Ադինյանը եւ Նարինե Գասպարյանը 9-րդ տուրում, թեեւ խաղում էին սեւերով, փորձեցին հասնել առաջատարին: Սակայն դա նրանց չհաջողվեց: Լիլիթը ոչ-ոքի խաղաց Քյուի, Նելլին՝ Սուլենիս Պինայի (Կուբա), իսկ Նարինեն պարտություն կրեց Օլգա Զիմինայից (Ռուսաստան):

Քյուն կրկին առաջատար է: Նա ունի 7,5 միավոր: Հինգ շախմատիստուհիներ, այդ թվում Ադինյանն ու Մկրտչյանը, չինուհուց ետ են մնում մեկ միավորով: Ցավոք, պարտություն կրեցին այս շարքային խմբում խաղացող մեր մյուս երեք շախմատիստուհիները:

Մինչեւ 18 տարեկան շախմատիստուհիների մրցաշարային աղյուսակը շարունակում է գլխավորել վրացուհի Ռուստուդան Գոլեթիանին, որն ունի 7,5 միավոր: Թեեւ մի քանի անընդմեջ հաղթանակներից հետո նա ոչ-ոքի խաղաց ռումինուհի Շիդոնիա Վայդայի հետ, այնուամենայնիվ պահպանեց մեկ միավորի խզումը իրեն հետապնդողներից 2-4-րդ տեղում ընթացող Թրանգ Տան Հոանգից, Փուոնգ Հոնգ Վոից (երկուսն էլ Վիետնամ) եւ Իրինա Սլավինայից (Ռուսաստան): Ավագ տարիքի աղջիկների առաջնությունում Հայաստանի երեք ներկայացուցիչներից լավագույն արդյունքը Լիլիթ Գալոյանինն է, որը 4,5 միավոր ունի:

Շախմատասերներին հիշեցնենք, որ մինչեւ առաջնությունների ավարտը մնացել է ընդամենը երկու տուր, եւ միայն վերջին հանդիպումները կանվանեն չեմպիոններին ու մրցանակակիրներին:

Ռ. Ա.

## Տպավորություններ առաջնություններից

***Երեւանի «Մոսկվա» կինոթատրոնում շարունակվող մինչեւ 16 եւ 18 տարեկան աղջիկների եւ տղաների շախմատի աշխարհի առաջնությունները մոտենում են ավարտին: Առաջնությունների կազմակերպման եւ ընթացքի մասին Արմենպրեսի թղթակցին կարճիկ հայտնեցին.***

**Մարտուն Ադոյանը**, «Մոսկվա» կինոթատրոնի տնօրեն. «Նախ ասեմ, որ մեր կոլեկտիվի համար նման կարգի մրցումների անցկացումը մեծ պատիվ էր եւ մենք, ՀՀ շախմատի ֆեդերացիայի հետ միասին փորձեցինք այն բարձր մակարդակով կազմակերպել: Ուրախալի է, որ այսուհետ աշխարհի տարբեր երկրներում ավելի լավ կճանաչեն մեր երկիրը, մայրաքաղաքը եւ, հույս ունեմ, նաեւ մեր կինոթատրոնը, որը մրցաշարի կենտրոնն էր: Շատ ուրախ ենք, որ առաջնությունները հաջողվեց լավ կազմակերպել, ինչում նաեւ երեւանի քաղաքապետարանի մեծ ներդրումը կա: Կցանկանայինք միայն, որ հայ մասնակիցներից որեւէ մեկը աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճեր»:

**Սամվել Վարդանյանը**, մրցավար. «Պետք է ասեմ, որ մրցաշարը տպավորկելը շատ հետաքրքիր է, բայց հենց այդ պատճառով՝ բարդ եւ դժվարանալու: Պատանի տաղանդները մրցում են անհաշտ, ոչ ոք չի ցանկանում զիջել նշանակետ եւ երեւանում ծնունդ առան շատ հետաքրքիր, լարված պարտիաներ: Անկասկած, այսօրվա մասնակիցներից շատերը աղագայում դեռ շատ ուշադրություն իրենց վրա կբեւեռեն: Մրցավարների աշխատանքը ընթանում է լավ, որեւէ դրոթլեմ չի եղել: Նշեմ նաեւ, որ հայկական շախմատի բարձր մակարդակի մասին խոսելով, նկատի է առնվում նաեւ մրցավարական դպրոցի բարձր մակարդակը»:

**Յոնաս Զվիդաբրասը**, Լիտվայի պատվիրակության ղեկավար, շախմատի ազգային ֆեդերացիայի փոխնախագահ. «Շատ բարձր եմ գնահատում մրցաշարի կազմակերպման մակարդակը, որպիսին հազվադեպ է հանդիպում այս տիպի մրցումներում: Հատկապես մասնակիցների տեղավորումը եւ սնունդը: Սա վկայում է Հայաստանի շախմատի ֆեդերացիայի մեծ հնարավորությունների մասին, որոնք, համընկնելով հայկական շախմատի ընդհանուր բարձր մակարդակի հետ, լավ էֆեկտ տվեցին»:

**Էդուարդ Հակոբյանը**, շախմատասեր, շախմատիստ Վարուժան Հակոբյանի հայրը. «Որպես այս, եւ ոչ միայն այս մրցաշարի հետ ուղղակի կապ ունեցող մարդ, ես շատ լավ գիտեմ, թե ինչքան հարցեր է առաջացնում նման մրցումների կազմակերպումը, ինչքան դժվարություններ են հաղթահարվում նախապատրաստական աշխատանքում: Բայց որ այսօր տեսնում ես Երեւանում ընթացող այս գեղեցիկ փառատոնը, հայկական շախմատի նոր հաջողությունները, ապա իրավացիորեն կարող ես ասել, որ գործադրված ջանքերն արդարացվել են»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԵՐԵՎԱՆ

## Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի առաջին նստաշրջանն սկսեց աշխատանքը

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հոկտեմբերի 1-ին Երեւանի «Արմենիա» հյուրանոցում իր աշխատանքը սկսեց Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի (ՀԽՀԿ) առաջին նստաշրջանը: Նրա աշխատանքին մասնակցում են Հայաստանի ու Արցախի ներկայացուցիչները, ԱՄՆ-ից, Լիբանանից, Ֆրանսիայից, Կիպրոսից, Կանադայից, Չինաստանից (Հոնգկոնգ), Բելգիայից, Իրանից ժամանած պատվիրակները, որոնք ներկայացնում են սփյուռքի խոշորագույն կազմակերպությունները:

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց ՀԽՀԿ նախագահ, ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ Աշոտ Մելիք-Շահնազարյանը: Իր ելույթում ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի փոխնախարար Իշխան Զաքարյանը գոհունակություն հայտնեց նման մրցումների կազմակերպման գաղափարից եւ խոստացավ, որ նախարարությունը հնարավորին չափ կաջակցի միջոցառմանը:

Առաջին օրը նստաշրջանը լսեց ՀԽՀԿ-ի նախագահ Ա.Մելիք-Շահնազարյանի հաղորդումը կոմիտեի կատարած աշխատանքի մասին (1997 թ. ապրիլի 30-ից առ այսօր), ճնարկեց Համահայկական խաղերի ծրագիրը: Նպատակահարմար համարվեց խաղերն անցկացնել 1999 թ. ամառվա վերջում կամ աշնան սկզբում: Եղույթ ունեցան նաեւ խաղերի ծրագրում ընդգրկված մի շարք մարզաձեւերի ՀՀ ֆեդերացիաների ղեկավարները, ճնարկվեցին նաեւ այլ հարցեր:

## Եվրոպայի ֆուտբոլային գավաթների համար

Երեքշաբթի օրը անցկացվեցին ՈՒԵՖԱ-ի գավաթի 1/32-րդ փուլի պատասխան հանդիպումները:

Իհարկե տեղի ունեցած երեսուներկու խաղերին անդրադառնալ չենք կարող: Նշենք միայն, որ դրանցից շատերն անցան լարված ու հետաքրքիր պայքարում:

Ռուսաստանի երեք թիմերից երկուսը՝ Մոսկվայի «Սպարտակն» ու Վոլգոգրադի «Ռոտորը», ինչպես եւ սպասվում էր, դուրս եկան հաջորդ փուլ: «Սպարտակը» սեփական հարկի տակ ոչ-ոքի՝ 2-2, խաղաց զվեյցարական «Սյոնի» հետ (առաջին խաղում մոսկվացիները հաղթել էին 2-1 հաշվով), իսկ «Ռոտորի» ֆուտբոլիստները, հյուրընկալվելով, երկրորդ անգամ պարտություն մատնեցին զվեդական «երերուին» (առաջին խաղում՝ 2-0):

Հետագա պայքարից դուրս մնացին Վլադիկավկազի «Ալանիայի» ֆուտբոլիստները: Առաջին խաղում նրանք Բուդապեշտում խոշոր՝ 0-3 հաշվով պարտություն էին կրել տեղի ՄՏԿ-ից, իսկ պատասխան հանդիպումը միայն ոչ-ոքի (1-1) կարողացան ավարտել: Չեմպիոնների լիգայի հերթական խաղերն անցկացվեցին երեկ, իսկ Գավաթակիրների գավաթի 1/16 եզրափակիչի պատասխան հանդիպումները կկայանան այսօր: Երեւանի «Արարատը» կիյուրընկալի Դանիայի «Կոպենհագեն» թիմին: Հիշեցնենք, որ առաջին խաղում երեւանցիները պարտվել են 0-3 հաշվով:



«Լիվերպուլ» (Անգլիա)-«Սելտիկ» (Շոտլանդիա) հանդիպումը, որն ավարտվեց 0-0 հաշվով: Առաջին խաղը նույնպես ոչ-ոքի (2-2) էր ավարտվել: Հաջորդ փուլ դուրս եկան անգլիացիները

## Դափնիների կամ ոսկիների վրա ննջելու հակումը բոլորին չէ բնորոշ

Չեռնագնդակի Իսպանիայի հավաքականի անդամ, օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր 29-ամյա Ինյակի Ուրդանգարինը որոշեց հետաձգել բիզնեսի ուսումնասիրությունը Մադրիդի համալսարանում մինչեւ բարենպաստ ժամանակներ: Հոկտեմբերի 4-ին կայանալու է նրա եւ արքայադուստր Քրիստինի հարսանյաց արարողությունը, ու մարզիկը գլխովին հաճելի հոգսերի մեջ է խրվել: Գեղեցիկ աչքերի եւ բարձր դիրքի դիմաց դիպլոմ ձեռք բերելու եւ կնոջ արքայադուստր ծնողների թագավոր Խուան Կառլոսի եւ թագուհի Սոֆիայի «ուսերին նստելու» փոխարեն նա որոշեց աշխատանք փնտրել եւ սեփական ուժերով ապահովել ընտանիքը: Լրագրողներին նա հայտնեց, որ սպորտում առեւտրային գործունեության հետ կապված աշխատանք է կամենում գտնել, իսկ սպորտին մատաղիր է հրաժեշտ տալ 2000 թ. Սիդնեյի օլիմպիադայից հետո: Ինչ վերաբերում է Բուրբոններին, նրանք էլ աչքի են ընկնում արքայատեսիությամբ: Ինքը՝ արքայադուստրը, հարյուր հազարավոր շարքային իսպանուհիների պես աշխատում է առավոտյան 9-ից երեկոյան 5-ը բարսելոնյան խոշոր բանկերից մեկի մշակույթի ֆոնդում որպես ենթակա:

«ԿՈՄՍՈՄՈԼՍԿԱՅԱ ՊՐԱՎԴԱ»

## «Երեւանյան աշուն» շախմատային փառատոնում

«Երեքունի» հյուրանոցում շարունակվում է «Երեւանյան աշուն» շախմատային փառատոնի միջազգային մրցաշարը: Անցկացված ինը տուրերից հետո առաջատարների խմբում «նեղված» է: Աղյուսակը 4-ական միավորով գլխավորում են վեց շախմատիստներ: Նրանց թվում են հաղթողի կոչման հիմնական հավակնորդները՝ գրոսմայստերներ Վալենտին Արբակովն ու Ալեքսեյ Ֆոմինը, ինչպես նաեւ երեւանցիներ Եվգենի Խաչիյանն ու Վահագն Խաչատրյանը, որոնք վերջին երկու տուրում երկուական հաղթանակ տարան:

Հայաստանի չեմպիոնուհի Գոհար Հլղաթյանը վաստակել է 2,5, էլինա Դանիելյանը՝ 2 միավոր:

Մրցաշարը եզրագիծը կհասնի հոկտեմբերի 3-ին:

ԱԶԳ

# Օրվա հետքով

ՇՐՋԱՆ

## Աշխարհաքաղաքական նոր իրավիճակ Անդրկովկասում

Սկիզբը էջ 1

Ինչ խոսք, այդ դուռը չբացվեց: Բայց Անկարան հերթական անգամ շրջանառության մեջ դրեց բացման գաղափարը: Դրան հետևեց Ադրբեջանի հակազդեցությունը: Նրա կամակորությունները վերածվեցին սանձարձակության եւ Թուրքիան մեղադրվեց ազերի եղբայրներին դավաճանելու մեջ: Թուրքական «Յուրրիյեթ» թերթը սեպտեմբերի 13-ի եւ 15-ի համարներում անդրադարձել է այդ սանձարձակություններին: Առաջին անդրադարձում, որ կրում է «Եղբայրական Ադրբեջանը մեր բարեկամն է» խորագիրը, հեղինակ Ֆաթիհ Ալթայլըն հեգնանքով գրում է. «Ինչ հրաշալի եղբայր է Ադրբեջանը: Մեկ խոսվում է, մեկ հաշտվում: Նա, չգիտես ինչու, թուրքական հաղթականության մեջ չափազանց հետեւողական է: Երբ մենք կասպյան նավթը մեր տարածքով միջազգային շուկա դուրս բերելու պատրաստակամություն ենք հայտնում, ազերիները սկսում են նագ ու տուգ անել: Քաղաքական պայմաններ են առաջ քաշում, թե չի կարելի Հայաստանի հետ հարաբերությունները բարելավել, առավել եւս նրա առջեւ սահմանային դուռ բացել: Ինչո՞ւ, որովհետեւ Հայաստանը ռուսական հրթիռներ է գնել. Ռուսաստանի հետ պայմանագիր է ստորագրել եւ ռուսներն ընդդեմ Ադրբեջանի պատրաստել են Հայաստանին: Ազերի եղբայրները մեզանից պահանջում են հակադրվել ռուսներին: Բայց ի՞նչ են անում իրենք: Ելնելով Հայաստանի հետ փոխհարաբերությունների բարելավման հավանականությունից Թուրքիային սպառնալու իրավունք են վերապահում իրենց: Հայերին աջակցող, Հայաստանին զենք տրամադրող Ռուսաստանի հետ բարեկամ են, իսկ Թուրքիայի հետ, որն ընդամենը խոսում է սահմանային դռան մասին՝ ոչ:

Երկրորդ արձագանքը, որ մատուցվում է Աբուլֆազ Էլչիբեյի հետ «Յուրրիյեթի» թղթակցի հարցազրույցի տեսքով, փաստորեն ուղղված է նախագահ Հեյդար Ալիեւին ու նրա իշխանություններին: Ակնհայտ է, որ «Յուրրիյեթը» վերջիններիս կարգի հրավիրելու համար էլչիբեյին է օգտագործում: Համենայնդեպս, պատասխանելով թղթակցի հարցին, էլչիբեյը ասում է. «Ես իմ կյանքը Թուրքիային եմ պարտական: Եթե չլիներ Թուրքիան, ապա ինձ հետ վաղուց հաշվեհարդար կտեսնեին: Պետական տարբեր գործիչներ Ալիեւին զգուշացրել են, որ ինձ չդիպչի: Նա Թուրքիայից վախենում է»:

Այնուհետեւ էլչիբեյը շարունակում է. «ԽՍՀՄ-ի փլուզումը Թուրքիային անակնկալի բերեց, որովհետեւ նա դրան պատրաստ չէր: Մինչդեռ Աթաթուրքը ժամանակին կանխատեսել էր Խորհրդային Միության փլուզումը եւ տասնյակ տարիներ առաջ ընդգծել, որ թուրքերն Անդրկովկասում հարազատ եղբայրներ ունեն»:

Էլչիբեյը տվյալ դեպքում ակնարկում է, որ Ադրբեջանը աղավինելով Թուրքիային՝ արդյունքի չի հասնի: Վերջինիս չի հաջողվել նաեւ Անդրկովկասը պաշտպանել ռուսական ազդեցությունից: Չնայած էլչիբեյի նկատմամբ բացասական վերաբերմունքին, այս հարցում նրա հետ, ըստ երեւույթին, համամիտ է նաեւ Ալիեւի վարչակարգը: Ահա թե ինչու Ադրբեջանը նպատակահարմար է գտնում Արեւմուտքի հետ իր կապը ոչ թե Թուրքիայով միջնորդավորել, այլ դրան ուղղակի բնույթ հաղորդել: Դա համապատասխանում է Վաշինգտոնի նկատառումներին: Կովկասն ու Միջին Ասիան ամերիկյան կենսական շահերի գոտի հայտարարելիս նա առաջնորդվում է Ադրբեջանը ռազմաքաղաքական հենակետի վերածելու հաշվարկներով: Թեեւ հայ-ռուսական պայմանագիրը խախտեց Ռուսաստանին Անդրկովկասից դուրս մղելու նրա հաշվարկները, բայց եւ այնպես Ադրբեջանը որպես ռազմաքաղաքական հենակետ պահպանեց իր տեղը ամերիկյան քաղաքական ծրագրերում: Իսկ դա Ադրբեջանին տվեց ԱՄՆ-ի աջակցությանն ապավինելու լայն հնարավորություն:

Այս պայմաններում տրամաբանական է, որ «Ադրբեջանի իրավունքները միջազգային ասպարեզում պաշտպանելու դերը» փոխանցվի ԱՄՆ-ին, իսկ Թուրքիան հետզհետե կորցնի իր երբեմնի նշանակությունը Ադրբեջանի համար: Այդ մասին են խոսում Բաքվի հարաճուն դժգոհությունները: Ինչքան էլ Թուրքիան արձագանքի այդ դժգոհություններին, ակնհայտ է, որ ԱՄՆ-ի քաղաքական ծրագրերում Ադրբեջանի տեղի ու դերի ամրապնդմանը զուգընթաց նրա դիրքերն Անդրկովկասում թուլանում են: Երբ Թուրքիան դիրքերի թուլացումը փորձում է կասեցնել Հայաստանի հետ հարաբերությունների բարելավման միտումներով, բախվում է Ադրբեջանի սանձարձակություններին: Թվում է, թե ԱՄՆ-ը սանձնելով Ադրբեջանի իրավունքները միջազգային ասպարեզում պաշտպանելու դերը, մեծապես սահմանափակել է ազերիների հակազդեցությանը դիմակայելու Թուրքիայի հնարավորությունները: Չի բացառվում, որ Թուրքիան Հայաստանի հարցում հետզհետե զրկվի ադրբեջանական իշխանությունների առարկումները ամերիկյան վերոհիշյալ ճնշումների հետ համադրելու, այսպիսով Բաքվի ու ԱՄՆ-ի միջեւ խուսանավելու հնարավորությունից եւս: Դա դեռ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորում չի նշանակում: Այնուամենայնիվ, Թուրքիային կանգնեցնում է ադրբեջանական քաղաքականությունը վերանայելու անհրաժեշտության առաջ: Դա իր հերթին կպայմանավորի նրա հայկական-քաղաքականության վերանայումը: Համենայնդեպս Անդրկովկասում ստեղծվել է աշխարհաքաղաքական նոր իրավիճակ: Դա Թուրքիայից պահանջում է համապատասխան մոտեցումների մշակում ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի նկատմամբ:

ԱՇԽԱՐՀ

## Ֆրանսիա-ԱՄՆ հակամարտությունը սրվում է

### *Ռուսաստանը, Եվրամիությունը եւ «Էլֆ Ակիտեյն» էլ ներքաշվեցին*

1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, RFI, VOA, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Այսօր հաղորդագրություն ստացվեց, որ ֆրանսիական «Էլֆ Ակիտեյն» նավթային ընկերությունը բանակցություններ է վարում Իրանի եւ Իրաքի կառավարությունների հետ՝ այդ երկրներում նավթատեղիների շահագործման մասին: Ընկերության ներկայացուցիչը հայտարարեց, թե պայմանագրերը կկնքվեն՝ հաշվի առնելով այն պատժամիջոցները, որոնք նշանակվել են ԱՄՆ-ի կառավարության կողմից այդ երկրների հետ տնտեսական համագործակցության համար: Եվրահանձնաժողովի ներկայացուցիչը երեկ հայտարարեց, որ ֆրանսիական «Տոտալ» նավթային ընկերության եւ Իրանի կառավարության միջեւ կնքված պայմանագրի իրագործման դեմ ուղղված ԱՄՆ-ի կառավարության ցանկացած գործողություններին կհետեւեն բողոքներ ԱՄՆ-ի եւ եվրամիության հարաբերություններում: Արտաքին տնտեսական հարցերով եվրոպական կոմիսար Միլան Բրիտանը հայտարարեց, որ «Տոտալ» նավթային ընկերությունը բոլոր իրավաբանական հիմքերն ուներ պայմանագիրը ստորագրելու: Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը նույնպես ենթադրեց ԱՄՆ-ի դիրքորոշումը, ըստ որի պետք է չեղյալ հայտարարվի Ֆրանսիայի եւ Ռուսաստանի ընկերությունների գազ արդյունահանելու վերաբերյալ գործարքը Իրանի հետ: Խոսելով ռուս եւ ֆրանսիացի լրագրողների հետ Բորիս Ելցինը նշեց, որ անթույլատրելի է, երբ որեւէ երկիր փորձում է Մոսկվային տնտեսական հաղթականություն թելադրել: Իսկ ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայթը երեկ խիստ ենթադրեց Ֆրանսիային՝ Իրանի հետ կոմերցիոն գործարքներին աջակցելու համար: Մադլեն Օլբրայթը զարմանք հայտնեց, որ Ֆրանսիան չի հասկանում Իրանին դրամ փոխանցելու հետեւանքները: Օլբրայթը հայտարարեց, թե իր կառավարությունը կփորձի այնպես անել, որ եվրամիությունը միանա միջազգային ահաբեկչությանն աջակցող Իրանի եւ Լիբիայի նման երկրների վրա դրված բեռնարգելքին՝ այդ երկրներ ներդրումներ կատարելու վրա դրված արգելքին:

## Ֆրանսիան չի վերադառնա ՆԱՏՕ-ի ռազմական կառույցներ

1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, BBC: Ֆրանսիան հրաժարվեց ՆԱՏՕ-ի ռազմական կառույցներ՝ ռազմական կոմիտե եւ միջուկային պլանավորման խումբ վերադառնալու իր մտադրությունից: Չնայած դրան, Ֆրանսիան խոստացավ շարունակել կառուցողական համագործակցությունը դաշինքի իր դաշնակիցների հետ: 1966 թվականին, այն ժամանակվա նախագահ Շարլ դը Գոլի որոշմամբ Ֆրանսիան հեռացել էր ՆԱՏՕ-ի ռազմական կառույցներից: Երկու տարի առաջ երկխոսություններ էին սկսվել վերադարձի մասին, սակայն չհաջողվեց համաձայնության գալ հրամանատարական նոր կառույցներում եվրոպական գործակիցների ավելի լայն մասնակցության հարցի շուրջ:

ԲԱԼԿԱՆՆԵՐ

## ՆԱՏՕ-ի խաղաղարարները Բոսնիայում հաղորդիչներ գրավեցին

1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, BBC: Բոսնիայում ՆԱՏՕ-ի զինծառայողները իրենց վերահսկողության տակ վերցրին բոսնիական սերբերի ռադիո եւ հեռուստահաղորդիչներ եւ դադարեցրեցին նյութերի հաղորդումը, որոնք, նրանց խոսքերով, վնաս են հասցնում խաղաղ գործընթացին: Առաջին անգամ ռուսաստանյան զինծառայողների աջակցությունն ստացած ՆԱՏՕ-ի ուժերը շրջապատեցին հաղորդիչները եւ իրենց վերահսկողությունը հաստատեցին առանց որեւիցե միջադեպի: Հաղորդիչները գտնվում էին նախագահ Բիլյանա Պլավշիչի դեմ բշնամաբար տրամադրված բոսնիական սերբերի ձեռքում: Ինչպես հայտարարեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանան, այդ միջոցառումը ցուցադրում է ՆԱՏՕ-ի արագ եւ եռանդուն գործելու վճռականությունը:

Պաշտոնական անձանց խոսքերով, հաղորդիչները կտրվեն տիկին Պլավշիչին հավատարիմ ուժերին, հենց որ նրանք ի վիճակի կլինեն պաշտպանել շենքերը: Այս հաղորդագրությունը Բոսնիայից ստացվեց հենց այն պահին, երբ ՆԱՏՕ-ի պաշտպանության նախարարները հոլանդական Մաաստրիխտ քաղաքում սկսեցին իրենց հանդիպումը՝ քննարկելու Բոսնիայում խաղաղապահ զորքերի ապագայի հարցը: 9 ամսից կլրանա այդ զորքերի մանդատը:

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

մեկ սենյականոց բնակարան (ընտիր կահավորված)
Նորքի I զանգվածում,
հեռ. 63-03-47

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

մեկ սենյականոց բնակարան 9 հարկանի շենքի 8-րդ հարկում, Խորենացու փողոցում:
*Զանգահարել 23-37-96*

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

մեկ սենյականոց բնակարան Կոմիտաս փողոցում, 5 հարկանի շենքի 5-րդ հարկում (Արաբկիր հանրախանութի շենքում):
*Զանգահարել 23-34-35*

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

սեփական երկհարկանի շենքի 2-րդ հարկը՝ բաղկացած երեք սենյակից: Երկու կողմից սեփական հողատարածք՝ 300 քառ մետր ընդհանուր մակերեսով: Երկու ավտոնավակայան, մուտքը առանձին: Հասցեն՝ Զրաբաս 68 (ԳԱ հետեւի մասում):
*Հեռախոս 52-54-39:*

ՎԱՃԱՌՎՈՒՄ է

Առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:
*Զանգահարել՝ 27 22 57 ժամը 10-16, 58 33 26 ժամը 18-23*

ՏԱՍՏՅՈՍ

## Ռիբկինը պարտավեց Չեչնիայից ռուսաստանցիներին արտաքսելու որոշումը

1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, BBC: Ռուսաստանը պարտավեց Ռուսաստանի բոլոր ներկայացուցիչներին Չեչնիայից արտաքսելը: Անվտանգության խորհրդի քարտուղար Իվան Ռիբկինը Չեչնիայի իշխանությունների որոշումն անվանեց կարճատես, մանրագի եւ անբարոյական: Չեչնիայի փոխնախագահ Վահա Արսանովը կարգադրեց արտաքսել Ռուսաստանի ներկայացուցիչներին, քանի որ Ռուսաստանը թույլ չտվեց իրեն թալել Ադրբեջան:

## Պավել Շերեմետը ազատ կարձակվի, սակայն կդատվի

1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն այսօր հայտարարեց, թե Ռուսաստանի հեռուստատեսության թղթակից Պավել Շերեմետը շուտով կարող է ազատ արձակվել, սակայն պետք է կանգնի դատարանի առջեւ: Նախագահի վկայությամբ, Շերեմետի գործով հետաքննությունն ավարտված է եւ հնարավոր է, որ 2-3 օրից դատախազությունը փոխի խափանման միջոցը: Շերեմետը ձերբակալվել էր հուլիսին՝ Բելառուս-Լիտվա սահմանն առօրինաբար հատելու մեղադրանքով:

## Հերթական մահափորձ Ռադուեւի դեմ

1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, BBC, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Գրոզնիում հերթական մահափորձն է կատարվել չեչենական անհաշտ դաշտային հրամանատար Սալման Ռադուեւի դեմ եւ նա լուրջ վնասվածքներ է ստացել մեքենայում տեղադրված ականի պայթյունից: Նրա թիկնապահը մահացել է: Չեչնիայի ՆԳՆ-ն հայտարարել է, որ պայթյունը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ Ռադուեւը դուրս է եկել Գրոզնիի հեռուստակայանից եւ նստել մեքենան: Նա այրվածքներով տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի հայտարարել է, թե մահափորձը կազմակերպել են Ռուսաստանի հատուկ ծառայությունները: Ինտերֆաքսի վկայությամբ, այս տարի միայն սա Ռադուեւի դեմ կատարված 4-րդ մահափորձն էր: Սալման Ռադուեւը չի ճանաչում ռուս-չեչենական հաշտության համաձայնագիրը:

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների մասին (առաջարկ, պահանջարկ) հեռախոսով 589167, 581351

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատուեր 675 . Տիրաժը 3000 Ստորագրված է տպագրության 1. 10. 1997 Գինը 100 դրամ